№ 102 ԵՐԵՔՇԱԲԹԻ 13 ՄԱՅԻՍԻ

1914

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 13 ՄԱՅԻՍԻ № 102

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ЗАЛА МУЗЫКАЛЬНАГО УЧИЛИЩА
(Грибоѣдовская ул.)
Во вторникъ, 13-го Мая 1914 г.
Д-ръ Философ. Седракъ Тараянъ
прочтетъ лекцію на русскомъ языкѣ, на тему:

Основные принципы нравственности:
ПОЗНАНІЕ—ЛЮБОВЬ—ТВОРЧЕСТВО

ПРОГРАММА ЛЕКЦІИ: 1. Основа нравственности—познаніе самаго себя. 2. Человѣкъ геніаленъ. 3. Цѣль жизни—геніальная дѣятельность, т. е. творческій трудъ въ широкомъ смыслѣ слова. 4. Двѣ группы творческихъ произведеній (научныя и художественныя). 5. Сущность и цѣль науки. 6. Сущность и цѣль изящныхъ искусствъ.

Послѣ лекціи Диспутъ, въ которомъ примутъ участіе желающіе изъ публики.

Цѣны мѣстамъ отъ 20 к. до 3 руб. Начало лекціи ровно въ 9 ч. вечера.

Билеты продаются: 1) въ книжномъ магазинѣ «Просвѣщеніе» на Головинскомъ проспектѣ подъ Собраніемъ, 2) въ книж. маг. «Гуттенбергъ» на Эриванск. площади, 3) въ книж. магазинѣ «Прометеусъ» на Михайловскомъ проспектѣ, рядомъ съ гостинницей Ветцеля, 4) въ Café Centrale подъ Городской Управой, 5) въ день лекціи отъ 7 час. вечера при входѣ.
(ա.օ.) առ. 439. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

նշանակում է աճուրդ քաղաքային հիմնարկութիւնների համար փայտ մատակարարելու սեպտեմբերի 1-ից 1914 թ. մինչև 1 սեպտեմբերի 1915 թ.։

Բոխի փայտ—300 սաժէն, չինար 50 սաժ.

Աւճալեան Ջրմուղի համար բոխի փայտ 40 սաժ.

Նրանք, որոնք կը կամենան մասնակցել աճուրդին, հրաւիրվում են ներկայացնել յայտարարութիւններ վերջնական գներով, փակ ծրարներում Ուպրավայի I բաժանմունքին մինչև մայիսի 23-ի ցերեկվայ ժամը 12-ը՝ ներկայացնելով նաև 500 րուբլի գրաւական։

Մատակարարութեան մանրամասն պայմանները և կոնդիցիան կարելի է տեսնել Ուպրավայի Մթերային բաժանմունքում ցերեկվայ ժամը 10—2-ը՝ ամեն օր։
առ. (հ.) 459. 2—1

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

սրանով յայտնում է, որ կիրակի, մայիսի 18-ին, երեկոյեան ժամը 7-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նշանակված է Ընկերութեան

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ,

որի օրակարգի խնդիրներն են՝
1) Ընկերութեան նոր անդամների ընտրութիւն.
2) Խորհրդի հաշիւը և տեղեկագիրը Ընկ. գործունէութեան մասին 1913/14 սեզոնի ընթացքում.
3) Վերստուգիչ յանձնաժողովի զեկուցումը.
4) Մրցանակաբաշխութեան ժիւրիի զեկուցումը.
5) Ընտրութիւններ՝ ա) Խորհրդի 2 անդամի (վիճակով դուրս գնացողների փոխարէն) և 3 փոխանդամի. բ) Մրցանակաբաշխութեան ժիւրիի 7 անդամի և 3 փոխանդամի, և գ) Վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխանդամի.
6) Ընթացիկ հարցեր։ առ. (18) 465. 2—1

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(ԶՈՒԲԱԼՕՎԻ ԱՆՈՒԱՆ)
Այսօր, երեքշաբթի, մայիսի 13-ին
ԲԵՆԵՖԻՍ
Տիկ. Դուրեան-Արմէնեանի
ՀԱՅԿ. ԴՐԱՄ. ԽՄԲԱԿՑ.
Մասնակց. դերասանների
կը ներկայացնէ առաջին անգամ Ժողովրդական Տան բեմի վրա—
ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ

ՁԱՐ ՈԳԻՆ

Դրամա 4 արարուածով։

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ. — Արմէնեան-Դուրեան, Գուլազեան, Զարէլ, Ցասմիկ, օր. Արծիւկ, պ. պ. Գալստեան, Ղազարեան, Յարութիւնեան, Ռուսեան, Ստեփանեան, Սերժ և ուրիշները։

Ռէժիսեօր՝ Ա. ԱՐՄԷՆԵԱՆ

Վարչութեան հերթապահ անդամ՝ Ա. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

Սկիզբը երեկ. ժամը $8^1/_2$-ին։

Տեղերի գները 80 կոպ. մինչև 10 կ.։

ԱԶԴ.—Յաջորդ հերթական ներկայացումը հինգշաբթի, մայիսի 15-ին—«ՏԵՐՐՈՐԻ ԶՈՀԵՐԸ»։
առ. 461 1—1

ԿՈՎԿ. Հ. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿ.

Մայիսի 14-ին, երեկոյեան ժամը $7^1/_2$ ին Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նշանակված է Ընկ. տարեկան ընդհանուր ժողովի շարունակութիւնը՝

Ըստ նոր կանոնադրութեան խորհրդի 13 անդամի, 7 փոխ-անդամի, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի ընտրութիւնների և անցեալ ժողովում չը քննված հարցերի քննութեան համար։
(ա. օ.) առ. 466. 2—1

ՑԻՐԿ

Ֆ. ԻՊԱՏՕՎԻ

Միխայլովսկի պր. № 189, Մուշտայիդի մօտ։

Այսօր, երեքշաբթի, մայիսի 13-ին խոշոր ներկայացում։ Առիթը մի՛ բաց թողնէք տեսնելու եգիպտացի Ալիին։ Ով չէ տեսել Ալիին, թող հարցնէ նրան ով եղել է Իպատովի ցիրկում և տեսել նրան։ Ալին այսօր երեկոյեան հանդէս կը գայ ժամը $10^1/_2$-ին։ Այսօր մասնակցում է նոյնպէս ամբողջ խումբը գլխաւորութեամբ ցիրկի վերատեսուչ Ֆ. Իպատովի։ Այսօր երկրորդ անգամը տեղի կունենայ սէնսացիօն բալէտ-պանտոմիմա՝ ղեկավարութեամբ գեղեցկուհի օր. Ելենա Իպատովայի։ Ցիրկում ներկայացումները տեղի են ունենում ամեն օր և ոչ մի դէպքում էլ չեն յետաձգվում։
առ. 462. 1—1

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաւասարդեան

Կանանց հիւանդութիւնների և մանկաբարձութեան մասնագէտ, տեղափոխվելով հանքային ջրերը՝ Պեատիգօրսկում և Եսէնտուկում մայիսի սկզբից ընդունում է հիւանդներ։

Հասցէն՝ Пятигорскъ, за соборомъ, Елизаветинская ул. д. Архипова.
առ. (Ե.Տ.Կ.) 458. 25—2

ԴՕԿՏՕՐ
Ա. Դ. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ
ԲԵՐԼԻՆՈՒՄ

Ասիստենտ Բերլինի համալսարանի Charité հիւանդանոցի

Շարունակում է ընդունել Գերմանիա դիմող հիւանդներին և խորհրդակցութիւններ է կազմում մասնագէտ-պրօֆեսօրների հետ։

Նոր հասցէն՝ Берлинъ, Фридрихштрассе 133 а. Телефонъ Норденъ 34—69. Berlin, Friedrichstr. 133 a.
(օ. մ.) առ. 391. 100—6

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
10 և 11 մայիսի

ՎԻԵՆՆԱ.—«Ալբ. Կոր.»-ին հաղորդում են Դուրացցոյից, որ 300 ապստամբ Դուրացցոյից 20 կիլոմետր դէպի հարաւ Կավայ քաղաքում ծածանել են Թիւրքական դրօշակ։

ՆԷԱՊՈԼ.—Սան-Ջուլիանոյի դիւանատան պաշտօնեայ Բիանկէրին այցելեց Էսադ-փաշային և երկար խօսակցեց նրա հետ։

Նէապոլում ձեռք են առնված միջոցներ՝ պաշտպանելու Էսադ-փաշային հնարաւոր մահափորձից։

ՏՐԻԷՍՏ.—Թուրխան-փաշան մեկնեց Դուրացցօ։

ՀՌՈՄ.—Ստեֆանիին հաղորդում են Դուրացցոյից, որ մայիսի 10-ին, կէսօրվայ ժամը 4-ին, կաբինէտը հրաժարական տուեց։ Մալիսօրները հրաժարվեցին հանդէս գալ ապստամբների դէմ, յայտնելով որ նրանց ներկայութեան նպատակն է միմիայն պաշտպանել Ալբանիայի իշխանին։ Ալբանական ժանդարմէրեան հօլլանդացի օֆիցերների հրամանատարութեամբ հանդէս է գալիս ընդդէմ ապստամբների։ Իտալայի և աւստրիացի նաւաստիները նշանակված են միմիայն պրինցի ընտանիքին պաշտպանելու համար։

Կէսօրվայ ժամը 5-ին։ Ապստամբները արշաւում են դէպի Դուրացցօ։ Ալբանիայի կառավարիչը ընտանիքի և շքախմբի հետ փոխադրվել է իտալական ռազմանաւը։

Երեկ. ժամը 7-ին։ Միջազգային վերահսկիչ մասնաժողովը ընդառաջ գնաց ապստամբներին՝ բանակցելու համար։

Երեկ. ժամը 8-ին։ Ապստամբները գերեցին չորս հօլլանդացի օֆիցերներին։ Ապստամբների պատգամաւորներն եկան Դուրացցօ և պահանջեցին ներկայացնել իրանց Վիդին, որ գլխաւոր շտաբի ուղեկցութեամբ ափ իջաւ։

Ստեֆանիի գործակալութեանը հաղորդում են Դուրացցոյից. «Երէկ երեկոյեան պրինցուհի Վիդը նորից ափ իջաւ, «Միսուրատայի» վրա մնացին միայն երեխաները»։

Իտալական դեսպան Ալիոտին հետեւեալն է հաղորդում. «Ապստամբների և ալբանական ժանդարմէրիայի միջև սկսված ճակատամարտը վերջացաւ հօլլանդացի օֆիցերների և զինւորների գերելով։ Կաթօլիկ-մալիսօրների զօրախումբը, թւով 120 հոգի, առաջին իսկ գնդակներից ցիրուցան եղաւ։ Դուրացցօյում տիրում է սարսափ։ Ռումինական դեսպանը, աւստրիական, ֆրանսիական, անգլիական և իտալական պատգամաւորներն ընդ առաջ գնացին ապստամբների պատգամաւորներին։ Սրանք յայտնում են, որ բոլոր գերիները կը գնդակահարվեն, եթէ մինչև վաղվայ առ. ժամը 8-ը հօլլանդական օֆիցերը չը բերէ պրինցի նամակը նպաստաւոր պատասխանով։

«Ապստամբները պահանջում են դադարեցնել թշնամական գործողութիւնները։ Պրինց Վիդը դիմեց պալատ և ստորագրեց պահանջվող նամակը։ Հօլլանդացի օֆիցերը հաղորդում է, որ ապստամբների թիւը 2000-ից անց է, մի քանի հազար հոգի գալիս են հեռուից։ Շարժումը կրօնական բնաւորութիւն ունի։ Ապստամբներին միանում են Էսադ-փաշայի հրոսակախմբերը, որոնք գործում են սեփական նախաձեռնութեամբ։ Իտալական միսսիան լի է իտալական գաղութի անդամներով, ալբաններով և դիպլոմատներով»։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՍԱԶՕՆՈՎԻ ՃԱՌԻ ՄԱՍԻՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 և 11 մայիսի

ՓԱՐԻԶ.—«Թանը», խօսելով նպաստաւոր կերպով Սազօնովի ճառի մասին, համաձայն չէ, որ համաձայնութեան ձևին նախապատւութիւն է տրվում զինակցութեան դիմաց՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի յարաբերութիւնների միջև, և գոհունակութեամբ վկայում է, որ եւրոպական խաղաղութիւնը ամրացել է հաւասարակշռութեան քաղաքականութեամբ։

«Ժուռնալ դէ Դէբա» ընդգծում է Սազօնովի յայտարարութիւնների անկեղծութիւնն ու ճշգրտութիւնը և միանգամայն համակրելի է մինիստրին, թէ երբեւէ համաձայնութեան պետութիւնների համերաշխ քաղաքականութիւնը հանդիսանում է երաշխիք, անկախ՝ պայմանագրերի բովանդակութիւնից և ձևից։

ՎԻԵՆՆԱ.—Լրագիրների մեծ մասը, խօսելով Սազօնովի ճառի մասին, ընդգծում է ճառի հաշտարար բնոյթը, շեշտում է Թագաւոր Կայսրի՝ Ռումինիա այցելելու կարեւորութիւնը։ «Նէյէս-Վինէր-Տագէբլատը» գոհունակութեամբ ընդգծում է, որ Սազօնովի ճառը զուգադիպվում է Բերխտոլդի այն խօսքերի հետ, թէ բարելավել են Աւստրիայի և Ռուսաստանի բարեկամական յարաբերութիւնները, և ճառը համարվում է խաղաղասիրութեան ցոյց։ «Ցէյտը» ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրա, որ աւստրօ-սերբական հարցերը լուծվում են Ռուսաստանի ձեռքով, և կարծում է, որ Աւստրիայի մասին արված յիշատակութիւնը հնչում է սառը, Աւստրիան ընդառաջում է լուրջ դէպքերի։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
10 և 11 մայիսի

ՈՒՐՄԻԱ.—Քիրմանշահի ուղղութեամբ մեկնեցին կօզակներ գնդապետ Անդրէեվսկիի հրամանատարութեամբ։

Պարսկա-թիւրքական սահմանագլխում—Ուրմիայի շրջանում, միջազգային սահմանազատ մասնաժողովի աշխատանքների համար տեղեր են գրաւում Թաւրիզից եկած պարսկական կօզակ զինւորները, որոնք վարժված են ռուս մարզիչներից։

ԹԷՀՐԱՆ.—Ժանտախտային հիւանդութիւնների պատճառով պարսից կառավարութիւնը կարգադրել է բժշկական քննութեան ենթարկել ճանապարհորդներին Ջուլֆայում և Կասպից ծովի նաւահանգիստներում։

ԹԱՒՐԻԶ.—Անկարգութիւններից յետոյ երկամեայ դադարից վերջ՝ նորից կազմվեց հասարակական քաղաքային ինքնավարութիւն Ջէնջան շրջանի խոշոր քաղաքներում։

Պարսից մի զօրամաս մեկնեց մշտապէս բնակվելու Խամսէ նահանգում։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 և 11 մայիսի

ԲԵԼԳՐԱԴ.—Սկուպշտինայի նիստը բանալու ժամանակ, երեսփոխան արմատական Դրաշկովիչը, պարսաւելով կառավարութեան գործողութիւնները, յայտնեց, թէ պրեզիդիումի ապօրինի վարմունքի պատճառով օպպօզիցիան հրաժարվում է ներկայ գտնվել նիստերին և խնդրում է պրեզիդիումին զեկուցել Թագաւորին օպպօզիցիօն բլոկի բողոքի մասին։ Յետոյ օպպօզիցիան հեռացաւ դահլիճից։ Սկուպշտինան նիստը շարունակեց։ Պաշիչը, հերքելով Դրաշկովիչի մեղադրանքը, ասաց, որ կառավարութիւնը կը շարունակէ աշխատել սկուպշտինայում, որպէս զի կարող լինի անց կացնել կարևոր օրէնսգիծ. անյաջողութեան դէպքում ժողովուրդը ըստ արժանւոյն կը գնահատէ յանցաւորների գործողութիւնները։

Սահմանադրական օրէնսգիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ 82 ձայնով ընդդէմ 2-ի։

Քաղաքական շրջաններում կարծում են, որ սկուպշտինան կարձակվի։

ԱԹԷՆՔ.—Ստորագրվեց յոյն-սերբական առևտրական պայմանագիր։

Աւստրիական պատգամաւորների համար տրված հրաժեշտի ճաշին Վենիզելոսը ճառ արտասանեց, որով գովաբանեց Ֆրանց-Յօզեֆի պետական խելացիութիւնը և մատուցած ծառայութիւնները։

ՍՕՖԻԱ.—Ազգային ժողովը ընտրեց մի մասնաժողով 30 պատգամաւորից բաղկացած՝ բազմակողմանի կերպով քննելու համար Գեշովի և Դանևի կաբինէտների գործադրած քաղաքականութիւնը։

Ազգային ժողովը որոշեց համայնքներում տարածել Գենադիևի ճառը, որ հանդիսանում է մեղադրական ակտ Գեշովի և Դանևի կաբինէտների դէմ։

Եապօնական զինւորական միսսիան դիտելով զօրքը և զինւորական հաստատութիւնները՝ մեկնեց Բուխարեստ։

ՓՈԹՈՐԻԿՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 և 11 մայիսի

ՀԱՄԲՈՒՐԳ.—Փոթորիկը կայծակի հետ մեծ վնասներ հասցրեց նաւահանգստում, քաղաքում և արուարձաններում։ Մի քանի շոգենաւեր քշվեցին Էլբից. շատ ծառեր տեղահան են եղել, տանիքների մեծ մասը պոկվել է։ Էլեկտրաքարշը առ ժամանակ դադարեց երթևեկելուց։ Մի քանի աէրօպլան փչացան։

ՍԻԶՐԱՆ.—Վօլգայի վրա մրրիկ է։ Քաղաքում ընկել են հեռագրական սիւները, պոկվել են տանիքները։ Ջերմութիւնը ընկաւ մինչև 5°-ի։

ՄԵՆԶԵԼԻՆՍԿ.—Գաւառի գիւղերից շատերը ջրի տակն են մնացել։ Երկրորդ օրն է՝ ծովային փոթորիկ է։ Փչացան աշնանացանը և գարնանացանը, անասուն, գոյք։ Գիւղացիների դրութիւնը ողբալի է։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
10 և 11 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Վերադարձան Լիվադիայից ներքին գործերի մինիստրների խորհրդի նախագահը, ներքին գործերի մինիստրը և երկրագործութեան գլխաւոր կառավարիչը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Թուրքէնդ գիւղը յայտարարված է ժանտախտից աննպաստ։ Բագուի քաղաքապետութիւնը և Բագուի նահանգը՝ սպառնական։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մինիստր Մակլակովի նախագահութեամբ բացվեց հասարակական խնամակալութեան համառուսական համագումարը։ Ներկայ են մօտ 300 հոգի։ Համագումարը բաժանվեց երկու սեկցիաների, բարձի թողի արված երեխաներին խնամելու հարցի, ինչպէս և զառամեալներին, հիւանդներին, հաշմանդամներին, Թափառշրջիկներին և աքսորից ազատված մարդկանց խնամելու հարցի համար։ Համագումարը ուղարկեց ամենահպատակ հեռագիր։

Օդագնաց Պէգուի երկրորդ և վերջին թռիչքին ներկայ էին 100,000 մարդ։ Պէգուն թռաւ 40 րոպէ, կատարելով 50 գլխապտոյտ։ Պէգուն մեկնում է Մոսկվա։

ՄՕՍԿՎԱ.—Մեծ շուքով տեղի ունեցաւ ս. Գերմօգէնի մասունքների բացման հանդէսը։

ՕԴԵՍՍԱ.—Քաղաքապետը առաջարկեց դատախազին պատասխանատւութեան ենթարկել քր. պատ. 73-դ, 74-դ և 90-րդ յօդուածներով բապտիզմը վարդապետողներին։

ԲԱԳՈՒ.—Սկսվեց Շիխլեարսկի երեք բէկերի գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են մի շարք աւազակութիւնների և յօգուտ իրանց Ղուբայի գաւառի ազգաբնակութիւնից տուրք առնելու մէջ։ Վկաների թիւը 300-ից աւելի է։ Պաշտպանում են Կարաբչեվսկին, Մալեանտովիչը և այլք։

ԹԷՄԻՐ-ԽԱՆ-ՇՈՒՐԱ.—Մայիսի 10-ին, գիշերվայ ժամը 1-ին, զգացվեց ուժեղ երկրաշարժ։

ԱՍՏՐԱԽԱՆ.—Նահանգում երևացել են ժանտախտով վարակված մկներ։

ԵԱԼՏԱ.—Եկաւ Ալուպկա Կովկասի փոխարքան։

Կ. ՊՈԼԻՍ.—Զինւորական մինիստրը և սուլթանի բժիշկը այցելեցին ռուսական հիւանդանոցը՝ համակրանք յայտնելու այն ռուս նաւաստիներին, որոնք վէրքեր են ստացել Թաշ-Կըշլա զօրանոցի հրդեհը հանգցնելու ժամանակ։

Պարլամենտն ընդունեց պատասխան ուղերձը գահական ճառի դէմ, որով նախկին կաբինէտը մեղադրվում է բալկանեան պատերազմների ժամանակ կրած պարտութիւնների համար, արտայայտվում է ազգի անվերադառնալի վճիռը՝ պահպանելու վեց դար առաջ Թիւրքիայի գրաւած երկիրը, հաւանութիւն է տրվում գերագոյն զինւորական դատարան կազմելուն՝ պատասխանատու անձանց որոշելու համար, պահանջ է դրվում՝ դատարանին յանձնելու քաղաքական սխալների մեղաւորներին և երկրում խռովութիւն սերմանող օրէնքների հեղինակներին։

ՎԻԵՆՆԱ.—«Կոր. Վիլհէլմը» յայտնում է, որ քանի կայսրի ընդհանուր ինքնազգացումը, ախորժակ ու ույժերը միանգամայն բաւարար են, մայիսի 10-ից դադարում է բիւլլետէնների հրատարակումը կայսրի առողջական դրութեան մասին։

ՎԻԵՆՆԱ.—Կայացաւ միջազգային կանանց համագումարի նախնական ժողովը, իրազեկ անելու պատգամաւորուհիներին Աւստրիայում տիրող կանանց շարժման դրութեան հետ։ Խորհրդակցութեանը մասնակցում են 12 ազգերի ֆեմինիզմի ներկայացուցչուհիներ։

ՄԻՏԱՎԱ.—Նիւ-Եօրկի ռուսական գաղթականական տան կառավարիչը մի նամակ է ուղարկել, խնդրելով կանգնեցնել ռուս բանւորների գաղթը Ամերիկա։ Աշխատավարձի բացակայութեան պատճառով՝ նրանք գտնվում են աղքատ վիճակում։

ԼՈՆԴՈՆ.—Արքայական Թատրոնում ցերեկվայ ներկայացմանը կալանաւորվեցին 7 կին և 2 տղամարդ։ Ամբոխը դէպի նրանց վերաբերվեց թշնամաբար։ Ոստիկանատանը սուֆրաժիստուհիները ընկան փեղկին և չը կամեցան նստել մեղադրեալների նստարանին։ Նրանց տարան ձեռքերի վրա։ Մի սուֆրաժիստուհի իր կօշիկը նետեց դատաւորի վրա։

Խուզարկութիւն կատարվեց սուֆրաժիստուհիների կենտրոնական կօմիտէտի շէնքում։ Մի սուֆրաժիստուհի կացինով ջարդեց բրիտանական Թանգարանում մումիաներով լի արկղը։ Երկու սուֆրաժիստուհի կալանաւորվեցին։

ԲԱԼՖՈՒՐ (Շոտլանդիա).—Գտնվեցին 2 ռումբ կէս սաժէն պատրոյգով՝ Գլազգո տանող ջրմուղի մօտ։ Պայթումը կը զրկէր Գլազգօն ջրից։ Գիւտի տեղում գտնվեցին սուֆրաժիստուհիների բրօշիւրներ։

ԷԴԻՆԲՈՒՐԳ.—Մի սուֆրաժիստուհի կացինով Թագաւորական ճեմարանում փչացրեց Լավրերիի նկարած՝ Թագաւորի պատկերը։

Կ. ՊՈԼԻՍ.—Թալէաթ-բէյը մեկնեց Ռումինիա։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Ունգարական պատգամաւորութիւնն ընդունեց ֆինանսական ընդհ.

մինիստրութեան նախահաշիւը։

ՕՍՆԱԲՐԻՒԿ.—Պիրօկսիլինի ֆաբրիկայում տեղի ունեցած պայթումից համարեա ամբողջ քաղաքում շինութիւնները ցնցւեցին։ Հազարաւոր ապակիներ ջարդւեցին, մի քանի տանիք պոկւեցին, ֆաբրիկայի պատերը մեծ մասամբ փլւեցին։ Սպանւեցին 3, վիրաւորւեցին 21 հոգի, 2 հոգի անհետ կորան։

ՏՐԻՍՏ.—Մամուլի տեղեկութիւնների համաձայն, ապստամբները յարձակւել են Դուրացցոյի վրա։

ՄԱԴՐԻԴ. — Պատգամաւորների պալատ։ Մինիստր-նախագահը յայտնեց, որ Սպանիան մտադիր չէ նուաճողական պատերազմ վարել Մարօկկօյում, բայց ձգտում է ոչնչացնել այնտեղի անիշխանութիւնը։

ՏՕԿԻՕ.—Տեղի ունեցաւ կայսրուհու թաղումը։ Մարմինը թաղվեց կայսրի գերեզմանի կողքին։ Թաղմանը ներկայ էին կայսրը, կայսրուհին, պրինցներ, դիւանագիտական մարմինը. փողոցները լի էին ժողովրդով։

ԲՐԷՍԼԱՒԼ.—Գերմանական ծովային միութեան ընդհանուր ժողովում ընդունվեց մի բանաձև, որով առաջարկվում է աւելի եռանդով գործադրել ծովային ծրագիրը։

ՊՐԱԳԱ.—Վախճանվեց նախկին մինիստր Ֆրիդրիխ Պացախը, որ երիտասարդ չեխերի պարագլուխներից մին։

ԿԱԼԻՇ.—Վէլինի գաւ. Շինկէլէվ գիւղում այրվեցին 81 տուն. հրդեհի ժամանակ զոհվեցին 7 հոգի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻԿՈԼԱՅ ԵԱԿՈՎԼԵՎԻՉ ՄԱՌՌ *)

(Գիտական գործունէութեան 25-ամեակի առիթով)

Մառը 1891 թ. Պետերբուրգի համալսարանում հայոց լեզուի պրիվատ-դոցենտ նշանակվելուն հետ միաժամանակ՝ սկսում է նրա գիտական ուսումնասիրութիւնների անվերջ շարքը։ Այսպէս օրինակ 1892 թ. Կայս. Հնագ. Կօմիսիայի և Հնագիտ. Ընկ. յանձնարարութեամբ անցնելով Ռուսական Հայաստան սկիզբն է դնում Անիի պեղումների։

1893 թ. ուսումնասիրում է հեթանոսական շրջանի դամբարանները Ելևանի շրջանում և Ալէքսանդրօպոլի ու Բօրչալուի գաւառներում։

Յաջորդ 1894 թ. անցնում է Եւրոպա և լսում է յայտնի գիտնականների և արևելագէտների (Վիլամենդանդ, Հիւպշման, Նէօլդէքէ) դասախօսութիւնները, իսկ 1896 թ. միջնադարեան հայ առակախօսների հետ ծանօթանալու համար այցելում է Վենետիկի ու Վիէննայի Մխիթարեանների, Հռոմի և Ինսբրուգի մատենադարանները։

1898 թւին Մառին մենք տեսնում ենք Աթօսում, ուր նա ուսումնասիրում է այնտեղի վրացերէն հին ձեռագրերը։ Համեմատելով Սուրբ Գրքի հին վրացերէն թարգմանութիւնը, նա եկաւ այն եզրակացութեան, որ ոչ միայն Սուրբ Գիրքը, այլ և ուրիշ շատ եկեղեցական գործեր վրացիք սկզբում թարգմանել են հայերէնից։ Իր ուսումնասիրութիւնների արդիւնքը յետոյ հրատարակեց առանձին գրքով «Հայերէնից եղած հին վրացերէն թարգմանութիւններ» վերնագրով։

1899 թւի գարնանը պաշտպանում է իր գիտական աշխատութիւնը՝ «Վարդանի առակները» խոշոր մեծ աշխատութիւնը, որի համար արժանանում է հայոց լեզուի մագիստրոսի աստիճանի և Բարձրագոյն հրամանով հաստատվում է հայ ու վրացի լեզուների էքստրա-օրդինար պրոֆէսոր։

Այդ ժամանակից մինչև այժմ նա Պետերբուրգի համալսարանում անխափ դասախօսում է հայոց ու վրաց լեզուները, այդ ազգերի գրականութիւնն ու պատմութիւնը։

Այս շրջանում նրա կատարած աշխատութիւններից նշանաւոր է Դվինի պեղումը, որին ձեռնարկեց 1901 թւին. ցաւօք սրտի պէտք է խոստովանել, որ այս գործը շարունակող չունեցաւ, այն ինչ բոլորին յայտնի է Դվինի կատարած պատմական դերը անցեալում ոչ միայն մեր, այլ և Արևելքի պատմութեան համար։

Նա պեղումներ է կատարում նաև Արտաշատ, ուսումնասիրում է Թիֆլիսում եղած հին վրացերէն ձեռագրերը։

Մառի կեանքում կարևոր տեղ է բռնում 1902 թւին դէպի Սինա և Երուսաղէմ կատարած նրա գիտական ուղևորութիւնը, որը տևեց ութ ամիս։ Այս երկար և հեռաւոր ճանապարհորդութիւնը կարևոր արդիւնքներ ունեցաւ։ Ի թիւս ուրիշ շատ յիշատակարանների, Մառը երևան հանեց Գրիգոր Լուսաւորչի վարքը արաբերէն լեզուով գրած, ցուցակագրեց Սինայի վրացերէն ձեռագրերը։ Պակաս հետևանքներ չունեցան նաև Մառի ուսումնասիրութիւնները Երուսաղէմի ս. Յակովբայ հայոց վանքի մատենադարանում և ս. Գեթսեմանի վանքում մնացած արաբերէն ու վրացերէն ձեռագրերի մասին։ Վերադարձին նա նշանակվում է հայերէնի և վրացերէնի օրդինար պրոֆէսոր։

Համնում է 1904 թւականի ամառը. Մառը նորից գալիս է Անի՝ այս անգամ հաստատ որոշելով կանոնաւոր հիմքերի վրա դնել մեր բազմաթիւ պատմական յիշատակարաններից գոնէ այդ մէկի ուսումնասիրութեան գործը։ Իր այդ որոշմանը նա հաստատ մնացել է մինչև այժմ ամբողջ տասը տարի բազմաթիւ զրկանքներ կրելով և յաղթելով շատ արգելքների։ Մեր նպատակից դուրս է մանրամասն թւել Մառի կատարած գործի կարևորութիւնը Անիում, որովհետև սա առանձին յօդուածի նիւթ է լինելու։ Արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ «Անիի խարաբաները, որոնք գողի և աւազակի բնակարան էին», 1904 թւից Մառի շնորհիւ դրվում են կանոնաւոր հսկողութեան ու պահպանութեան ներքոյ ու ամեն հայի համար դառնում են ուխտագնացութեան տեղիք։ Անիի աւերակ եկեղեցիները, որոնք մինչև Նիկոլայ Եակովլեվիչի այնտեղ մտնելը անասունների գոմեր էին, որովհետև կառավարութիւնը քաղաքի աւերակները իբրև արօտատեղի աճուրդով տալիս էր գիւղացիներին անասուններ պահելու համար, նրա շնորհիւ ազատվում են այդ սրբապղծութիւնից։ Անիի ուսումնասիրութեան ծախքի մեծ մասը իր վրա վերցրեց Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհուրդը։

Չը նայելով՝ որ վերջին տասը տարին Մառը ամառները անցրել է Անի, այնուամենայնիւ ազատ ժամանակները նա գիտական և հնագիտական ուղևորութիւններ է կատարել Կովկասի այլ և այլ կողմերը։ Այս ժամանակամիջոցում պեղել և ուսումնասիրել է Գառնիում Տրդատայ թախտը, Դուշեթում ու Կղարջքում նկարագրել է Գրիգոր Հանձթեցու և նրա աշակերտների ձեռքով հաստատած վանքերը, ուսումնասիրել է Բանի տաճարը, որը ճարտարապետական տեսակէտից կապ ունի Զուարթնոց եկեղեցու և Անիի Գագիկի Կյուր եկեղեցու հետ։

Մառի գիտական գործունէութեան մէջ առանձին ճիւղ է կազմում հայ և վրացի լեզուների ծագմանը նուիրած ուսումնասիրութիւնը։ Այս նպատակով նա կազմել է հայերէնի ու վրացերէնի քերականութիւնը և հրատարակել զուտ լեզուագիտական ուսումնասիրութիւնների մի մեծ շարք։ Այն օրվանից, երբ Մառը առաջ քաշեց հայ, վրացի և կովկասեան միւս լեզուների միութեան ու ծագման մասին կազմած իր «Յաբեթական լեզուագիտութիւն» տեսութիւնը, նա նիւթ ժողովելու նպատակով բազմաթիւ ուղևորութիւններ է կատարել Լազիստան, սվանների և աբխազների երկիրը։ Վերջերս ուսումնասիրում է Թուշերի ու չէչէնների լեզուն։ Այս շարքի մէջ առանձին շնորհակալութեան արժանի է վերջին հետազօտական աշխատութիւնը, որով յարգելի գիտնականը փորձում է որոշելու սեպագիր արձանագրութիւնների լեզուն՝ հիմք ունենալով յաբեթական լեզուների մասին իր ստեղծած տեսութիւնը։

Կայսերական գիտութիւնների ճեմարանը գնահատելով նրա գիտական գործունէութիւնը 1909 թ. նրան անդամ ընտրեց։ Այդ օրվանից գիտութիւնների ճեմարանը Մառի խմբագրութեամբ հրատարակում է հայերէն և վրացերէն հին բնագրերի մի նոր շարք, «Հայ-վրացական մատենադարան» վերնագրով։ Մառը եռանդուն մասնակցութիւն ունի նաև գիտութիւնների ճեմարանի հրատարակած «Քրիստոնեայ Արևելք» հանդէսում։ 1912 թւից ֆակուլտէտի ընտրութեամբ Մառը վարում է դեկանի պաշտօնը։

Մառը ամուսնացաւ շատ ուշ՝ համալսարանը աւարտելուց անմիջապէս յետոյ, կնութեան առնելով Պետերբուրգի համալսարանի պարսկերէնի ուսուցչապետ Ժուկովսկիի քոյր Ալէքսանդրա Ալէքսէևնային։ Վերջինս՝ համակրելով իր ամուսնու գաղափարները՝ նրա օգնականը և խորհրդակիցը հանդիսացաւ։

Նիկօլայ Եակովլևիչը մինչև այսօր եղող օտար հայագէտների մէջ միակ բացառութիւնն է կազմում նրանով, որ նա քաջ ծանօթ է ոչ միայն գրաբարի և աշխարհաբարի տեսութեանը, կարդում ու հասկանում է, այլ ազատ խօսում և գրում է հայերէն. հէնց այդ պատճառով, երբ հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոսը ներկայացաւ կայսրին, թարգմանի պաշտօնը կատարում էր Մառը։ Նա ծանօթ է հայոց շատ բարբառների, իսկ վրացերէնը նրա մայրենի լեզուն է։

Նա պատուաւոր անդամ է Վենետիկի Մխիթարեանների ճեմարանի, Հայոց և Վրաց Ազգագրական Ընկերութիւնների։ Իսկական անդամ է Կ. Պօլսի ռուսաց հնագիտական ճեմարանի, Պետերբուրգի և Մոսկվայի Կայսերական Հնագիտական Ընկերութիւնների, Կայսերական Ռուսական Աշխարհագրական Ընկերութեան և աշխատակից անդամ է Կայսերական Հնագիտական Կօմիսիայի։

Այժմ, երբ Մառը անցել է բեղմնաւոր գիտական գործունէութեան մի շրջան, նա հազիւ 50 տարեկան մեծ պաշարով զինված մի գիտնական է, որը Կովկասի անցեալի ուսումնասիրութեան գործում անչափ մեծ դեր է խաղալու։

Սմբատ Տէր-Աւետիսեան

Կ. Հ. ԲԱՐԵԳ. ԸՆԿ. ԺՈՂՈՎԸ

Շաբաթ, մայիսի 10-ին, երեկոյեան ժամը 8-ին կայացաւ Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, նախագահութեամբ բժշկապետ Բ. Նաւասարդեանի և քարտուղարութեամբ Լևոն Յովհաննիսեանի։ Այդ ժողովի առիթով մի քանի օր առաջ հրատարակվել էր Ընկերութեան 1913 թ. ընդարձակ տեղեկագիրը և բաժանվել անդամներին։ Այդ թւին կենտրոնը ունեցել է 58 մշտական և 367 տարեկան անդամներ, իսկ ճիւղերի թիւը եղել է 63։

Թողնելով հաշիւների մասին խօսել առանձին, պէտք է [illegible], որ ժողովը քննեց և հաստատեց կենտրոնի և ճիւղերի 1913 թ. հաշիւները և մի քանի ճիւղերի նախահաշիւները։ Վերստուգիչ յանձնաժողովը գտել էր բոլոր հաշիւները կանոնաւոր։ Ապա ժողովը քննութեան առաւ խորհրդի առաջարկը՝ նշանակել կենսաթոշակ օր. Շ. Քանդարեանին, որ 11 տարի եղել է Խուդադեան որբանոցի կառավարչուհի և այժմ ստիպված է թողնել այդ պաշտօնը հիւանդութեան և յոգնածութեան պատճառով, և միանուագ նպաստ 180 ր. (3 ամսվայ ռոճիկը)։ Սակայն ժողովի անդամներից շատերը գտան այդ քանակը շատ քիչ, ի նկատի ունենալով օր. Քանդարեանի բարեխիղճ ծառայութիւնը, և ողջունելով խորհրդի որոշումը՝ վարձատրել իր աշխատաւորներին, առաջարկեցին կենսաթոշակ նշանակել 25 ր. և միանուագ տալ 200 ր.։ Խորհուրդը համաձայնեց տալ 20 ր. և միանուագ 200 ր.։ Գաղտնի քուէարկութեամբ ընդունվեց խորհրդի առաջարկը։

Վերջում տեղի ունեցան խորհրդի 4 անդամի, 2 փոխ-անդամի և վերստ. յանձնաժողովի 3 անդամի ընտրութիւնը։ Խորհրդի անդամներ վերընտրվեցին տ. տ. Հ. Առաքելեան, իշխ. Մ. Թումանեան և պ. պ. Ս. Յարութիւնեան և Յ. Շահնազարեան, գրեթէ միաձայն, իսկ փոխ-անդամներ՝ պ. պ. Մեսրոպեան և Ն. Մատինեան. վերստ. յանձն. անդամներ՝ պ. պ. Ս. Խարազեան, Աֆրիկեան և Աւագեան։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Անարխիան Քութայիսում

Քութայիս, 9 մայիսի

Միհրան Անանեանի գերման դէպքը դեռ թարմ է ժողովրդի յիշողութեան մէջ։ Եւ այժմ էլ չեն դադարում նոյնանման դէպքեր։ Կարծես Դաղստանի հերոս Շամիլի խլրտումների ժամանակներումն ենք ապրում։

Դրամաշորթութիւն, թալան, կենդանի մարդկանց գերել, սպառնական նամակներով փող պահանջել հարուստներից՝ խրոնիքական բնաւորութիւն են ստացել։ Կեանքի ապահովութիւնը խախտված է Քութայիսում, ունեոր մարդիկ սարսափի մէջ են, արձակ համարձակ շրջելը անհնարին է, կարողութեան տէր մարդիկ ստրաժնիկներով են ման գալիս։

Մի շաբաթ առաջ գերեցին միլիոնատէր հրեայ Ցիցիաշվիլիի որդուն։ Երեք օր առաջ երկաթուղու բժիշկ դոկտոր Նազարովը գիշերվայ ժամը 1-ին կլուբից տուն է գնում և տան բակում հանդիպում ատրճանակներով զինված մի քանի չարագործների, որոնք բժշկի մատներից հանում են թանգագին մատանիները, ոսկէ ժամացոյցը և խլում են մօտը եղած բոլոր փողերը։ Սակայն դրանով չը բաւականանալով հետը մտնում են բնակարանը և այնտեղ էլ 500 րուբլի փող առնում և այնպէս խնայում նրա կեանքը։ Իսկ երէկ, օրը ցերեկով, քաղաքի կենտրոնում, բուլվարի մօտ, բռնում են հարուստ հրեայ Ռիժինաշվիլիի վեցերորդ դասարան գիմնազիստ որդուն և՝ չը նայելով նրա բարձրացրած աղաղակներին՝ մարդկանց աչքի առաջ նստեցնում են կառք և տանում։

Երկու շաբաթ առաջ հարուստ վաճառական Բարաբաձէին սպառնական նամակ են ուղարկում 5000 րուբլի պահանջով։ Մարդը ստրաժնիկ է կանգնեցնում դրան մօտ և մինչև այսօր էլ տանից դուրս չէ գալիս։

Այս յիշատակածներս պատահող դէպքերի չնչին մասն է։ Ի՞նչ պէտք է լինի կեանքի այս աննօրմալ դրութեան վերջը, յայտնի չէ։

Ս. Նազարեան

—

Երկու անմեղ զոհ

Կումիս (Թիֆլ. գաւ.), 9 մայիսի

Մայիսի 9-ի երեկոյեան ժամը մօտ 4-ին, Թուրք հովիւները ոչխարի հօտը քշելու ժամանակ, Շալուխպուր կոչվող գիւղի մօտ ղուրուղչին կտրում է առաջը և թոյլ չէ տալիս արօտի միջոցով անց կացնել։ Այս առիթով կռիւ է ընկնում։ Զինված հովիւներից մէկը իսկոյն հրացանազարկ է անում ու տեղն ու տեղը սպանում նրան։ Հովիւներն ապա հօտը թողնում են անտէր ու փախչում։ Գիւղացիները, բռնելու նպատակով, հետևում են չարագործին։

Կումիսեցի Սարգիս Ղազեանը, լսելով գիւղացիների «բռնեցէք մարդասպանին» աղաղակները, առաջ է վազում իր հովուական մահակով՝ ձերբակալելու մարդասպանին իր ընկերներով։ Սակայն չարագործը նրան էլ գնդակահար է անում ու փախչում։ Մարդասպանին դեռ չեն ձերբակալել։

Ղ. ք. Ա.

—

Գրիգոր վարդապետի մահը

Սևան, 6 մայիսի

Այսօր հողին յանձնեցինք 86-ամեայ բազմավաստակ Գրիգոր վարդապետին, որը ազգով քիւրդ էր և ծնվել էր Մասիսի ստորոտում, պատմական Ակոռի գիւղում։

1840 թւին յիշեալ գիւղի կործանումից ազատվելով անցել էր Երևանի հայ գիւղերը և ծառայութիւն էր անում հայերի ընտանիքում։ Յետոյ Ալափարս գիւղում մկրտվում է և կոչվում է Գրիգոր։ Ապա Սևան գալով ընդունվում է միաբան և 1872 թ. Գէորգ Դ. կաթողիկոսի հրամանով ձեռնադրվում է վարդապետ։

Գրիգոր վարդապետը Սևանում եղած բոլոր ժամանակ, աւելի քան 60 տարի, նախ կրտսեր, ապա աւագ լուսարարի պաշտօն է վարել. 3—4 տարի վանահայրութեան պաշտօն է կատարել և համարեա միշտ վանքի աշխատասէր նուիրակն է եղել։ Շնորհիւ իր ջերմեռանդ հաւատքի, մաքուր վարքի և սիրաշահ բնաւորութեան՝ բոլոր ժողովրդից, նաև բոլոր միաբաններից մեծ յարգանք էր վայելում։ Գրիգոր վարդապետը իր կեանքի եղանակով հին դարերի կրօնաւորական կեանքի տիպարն էր ներկայացնում։

Յուղարկաւորութեան ժամանակ հանգուցեալի հօրեղբօր որդին, Մկրտիչը, որը նոյնպէս ծնվել է քիւրդ, ապա մկրտվել, և որը այժմ գիւղական ուսուցիչ է, իր հօրեղբօր վրա դամբանական կարդաց, թւելով հանգուցեալի առաքինութիւնները և վանքին մատուցած հաւատարիմ ծառայութիւնը։

Տ. Ս.

ՅՈՒՆԱԿԱՆ ԳԱՂԹԸ ԿՈՎԿԱՍԻՑ

Ինչպէս ռուսական, այնպէս և արտասահմանեան լրագիրներում տեղեկութիւններ երևացին այն մասին, որ վերջին ժամանակներս աւելի քան 100,000 յոյն են գաղթել Կովկասից։ Համաձայն այդ տեղեկութիւնների, յոյների փախուստի գլխաւոր պատճառն այն նեղումներն էին և ճնշումները, որոնց իբր թէ ենթարկվում են յոյները ռուսաց ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան պաշտօնեաները։

Այդ առիթով «Н. В.»-ի թղթակիցը խօսակցութիւն ունեցաւ Պետերբուրգում յունաց գեներալ-հիւպատոսի հետ։ Վերջինս ի միջի այլոց յայտնեց, որ, յիրաւի, յոյների գաղթը Կովկասից, գլխաւորապէս Կարսի շրջանից, վերջին ժամանակ բաւականին սաստկացել է։ Սակայն 100,000 թիւը հիւպատոսը գտնում է շատ չափազանցված։ Նա կարծում է, որ պատերազմից յետոյ Կովկասի սահմաններից գաղթել են ոչ աւելի քան 20,000 հոգի։

— Ի՞նչ պատճառներից է սկսվել այդ գաղթը,—հարցրեց «Н. В.»-ի թղթակիցը։

— Յամենայն դէպս ռուսական ժող. լուս. մինիստրութեան գործադրած ճնշումների մասին խօսք լինել չէ կարող։ Յոյները մեկնում են Կովկասից՝ դրդված զուտ հայրենասիրական նկատումներից։ Նրանք դիմում են նոր նուաճված երկիրները և ձգտում են ընկնել Սալոնիկ։ Յոյների հետ միասին Կովկասից գաղթում են բազմաթիւ թիւրքեր։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՀԱՇՒԻ ՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Պետերբուրգ, 10 մայիսի

Նախագահում է Րօձեանկօն։

Մինիստրական օթեակում է արտաքին գործերի մինիստր հօֆմէյստէր Սազօնովը։

Տեղեկաբեր Կրուպէնսկի 1-ինը ընդգծում է, որ Պետական Դումայի առաջ արտայայտված ցանկութիւնները՝ գործնական արևելեան ճեմարան հիմնելու, նախագիծ մշակելու և արևելեան լեզուների ուսումնական ճիւղը վերակազմելու մասին՝ մինչև օրս վերջնական լուծում չեն ստացել, ինչպէս նաև չէ իրականացված Դումայի ներկայացրած առաջարկութիւնը՝ արտաքին գործերի մինիստրութեան նախահաշւով Ֆինլանդական Մեծ Իշխանութեան գումարներից ծախքերի արդարացի վճարման մասին։

Ապա տեղեկաբերը, հրաւիրելով առանձին ուշադրութիւն, թէ անհրաժեշտ է, որպէսզի մինիստրութիւնը պատրաստ լինի առաջիկայում Գերմանիայի հետ առևտրական պայմանագիր կապելիս, ցանկութիւն է յայտնում, որ մամուլն ու հասարակութեանը լայն հնարաւորութիւն տրվի պարզաբանվել այդ հարցի առիթով։

Բիւջէտային յանձնաժողովը առաջարկում է մի բանաձև, որ ցանկալի է ընդունում, որպէսզի մինիստրութեան արտասահմանեան գործակալների գործունէութիւնը մշտապէս ուղղված լինի Ռուսաստանի արժանապատւութիւնը և նրա ազգային շահերը պաշտպանելու, որպէսզի զուտ միջազգային դիւանագիտական յարաբերութիւնների հետ զուգընթաց լուրջ ուշադրութիւն դարձվի և զանազանակերպ առևտրական շահերի վրա, որպէսզի մինիստրութիւնը հաշւի առնէ երկրի ներսի կենդանի շահերը և հասարակական կարծիքը ժողովրդի շահերին վերաբերող հարցերում, որպէսզի արտասահմանում գործադրվի կանոնաւոր ու հետևողական և զգոյշ եկեղեցական ու դաւանաբանական քաղաքականութիւն, որպէսզի մինիստրութեան պաշտօնեաների կազմը թարմացնելու ու վերակազմելու նկատառումով ծառայութեան կոչվին միանգամայն պատրաստված անձինք հասարակութեան տարբեր խաւերից։

⁂

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՃԱՌԸ

Բալկանեան ճգնաժամը

Պետական Դումայի պ. պ. անդամներ. առաջ քան դուք կը ձեռնարկէք արտաքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութեան, ես կամենում եմ Թագաւոր Կայսրի Բարձրագոյն թոյլտւութեամբ տալ ձեզ այժմեան միջազգային դրութեան պատկերը և ըստ հնարաւորութեան լուսաբանել ձեզ ռուսական դիպլօմատիայի վերջին ժամանակի գործունէութիւնը։

Ապրելով անցեալ տարի ծանր ճգնաժամ, երբ ժամանակ առ ժամանակ ուժեղ ցնցումներ եղան Մերձաւոր Արևելքում և քանիցս վտանգ երևաց, թէ բարդութիւնները կարող են անցնել և Բալկանեան թերակղզու սահմաններից դուրս, մենք, բարեբաղդաբար, մտանք այժմ աւելի հանդիստ դարագլխի մէջ. և թէև տակաւին շատ բան հարկաւոր է կարգաւորել, բայց յամենայն դէպս արդէն չը կայ այն լարված կացութիւնը, որ դեռ վերջերս լուրջ մտահոգութիւն էր պատճառում։ Յիշեալ ճգնաժամի բարեյաջող լուծման բաւականին նպաստեց երրեակ համաձայնութեան միութիւնը, որին պատկանում է Ռուսաստանը։

Ֆրանկո-ռուսական դաշնակցութիւնը

Արտաքին քաղաքականութեան մէջ Ռուսաստանը շարունակում է յենվել Ֆրանսիայի հետ կապած իր անսասան դաշնակցութեան և Անգլիայի հետ ունեցած բարեկամութեան վրա։ Ֆրանկո-ռուսական դաշնակցութեան նշանակութեան մասին հազիւ թէ հարկ լինի մանրամասն խօսել, որովհետև յընթացս իր գոյութեան քսան տարիների նա արդէն տուել է իր արդիւնաւորութեան բաւականաչափ ապացոյց։ Այն համոզմունքը թէ այդ դաշնակցութիւնը անհրաժեշտ է երկու պետութիւնների իսկ բարիքի համար, խոր արմատներ է ձգել երկու դաշնակից ժողովուրդների գիտակցութեան մէջ։ Այս ամառ պ. Պուանկարէի գալուստը նոր առիթ կը տայ՝ երևան հանելու փոխադարձ սրտագին զգացմունքները, որոնցով ոգևորված են Ռուսաստանը և Ֆրանսիան։ Յիշելով որ դաշնակցութեան կայունութեան ու արդիւնաւորութեան հիմնական պայման հանդիսանում է քաղաքականութեան ուղղութեան համակերպութիւնը, կայսերական և ֆրանսիական կառավարութիւնները գտնվում են մշտական շփման մէջ իրար հետ՝ երկուստեք հետաքրքրող հարցերի միացեալ քննութեան համար։

Ռուս-անգլիական բարեկամութիւնը

Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի միջև վաղուց ի վեր հաստատված ամուր բարեկամական յարաբերութիւնները թոյլ տուին ընդլայնել այդօրինակ շփման շրջանակները, և նրանում ներկայումս մասնակցում է նաև Մեծ-Բրիտանիան։ Ինչպէս ես արդէն յիշատակեցի, այդ համգամանքը անպայման կը ծառայի՝ պահպանելու խաղաղութիւնը վերջին ապրած ծանր րօպէներին։ Դա իր հերթին դրդեց մեզ, Լօնդոնի անցեալ տարվայ դեսպանաժողովը աւարտվելուց յետոյ, Լօնդոնում պաշտօնավարող ռուսական և ֆրանսիական ներկայացուցիչների վրա պարտաւորութիւն դնել՝ միասին քննելու անգլիական արտաքին գործերի մինիստրի հետ մի շարք հարցեր, որոնք կապված են մօտիկ անցեալի բարդութիւնների վերջնական լուծման հետ։

Եռապետեան դաշնակցութիւն

Մենք կարողացանք համոզվել, որ այդ տեսակ ձևը, արագացնելով ու դիւրացնելով բանակցութիւնները երրեակ համաձայնութեան պետութիւնների միջև, էական օգուտ է բերում։ Այդ առիթով վերջերս շատ խօսվեց այն մասին, թէ երրեակ համաձայնութիւնը վերածվում է նոր երրեակ դաշնակցութեան։ Ինձ թւում է, որ ներկայ դէպքում ձևի հարցին տրվում էր մասամբ չափազանցված նշանակութիւն։ Կարելի է երևակայել պաշտօնական դաշնակցութիւն չը հիմնված, սակայն շահերի իրական ընդհանրութեան և ժողովուրդների փոխադարձ վստահութեան վրա. միւս կողմից կան մեծ պետութիւնների քաղաքական կապակցութիւններ, որոնք ինքնին աչքի են զարնում շնորհիւ նպատակների միանմանութեան։ Վերջին դէպքում այդ նպատակների համերաշխօրէն ձգտելը ապահովված է՝ անգամ անկախ գրաւոր համաձայնութիւնների ձևից ու կաղապարից։ Առհասարակ կենսունակ է սոսկ այն, ինչ որ չէ սառել մի կէտում, այլ ընդունակ է առաջ շարժվել։ Այդ մտքով մեր դաշնակցութիւնը Ֆրանսիայի հետ և մեր բարեկամութիւնը Անգլիայի հետ լիովին բաւարարութիւն են տալիս վերոյիշեալ պայմանին, որովհետև թէ առաջինը և թէ երկրորդը շարունակում են ամրանալ ու զարգանալ։

Հաւասարակշռութիւնը Եւրոպայում

Ընդ սմին իմ պարտականութիւնն եմ համարում շեշտել, որ ինչպէս տարիների ընթացքում չքացաւ այն անհանգստութիւնը, որ երևան էր գալիս երրեակ զինակցութեան գոյութեան սկզբնական շրջանում, այնպէս և այժմ պէտք է յուսալ, թէ ամենքն արդէն կարող են հանգիստ վերաբերվել երրեակ համաձայնութեան պետութիւնների նոր կապակցութեան։ Զուրկ ամեն տեսակ յարձակողականութիւնից, նա միայն պահպանում է անհրաժեշտ հաւասարակշռութիւն Եւրոպայում և, ինչպէս մենք տեսանք վերջերս, միշտ պատրաստ է աշխատակցելու երրեակ զինակցութեան հետ յանուն խաղաղութեան ընդհանուր շահերի։ Մի խմբակցութեան պատկանելը, հասկանալի է, չէ նշանակում՝ թէ չը պէտք է բարի յարաբերութիւններ ունենալ մնացած մեծ պետութիւնների հետ։

---

*) Տես «Մշակ» № 101.

Ռուս-գերմանական յարաբերութիւններ

Մասնաւորապէս մենք շարունակում ենք ձգտել հինաւուրց բարեկամական յարաբերութիւնները պահպանելու գերմանական պետութեան հետ։

Վերջին ժամանակ մի քանի դէպք եղաւ, երբ թւում էր, թէ այդ յարաբերութիւնները կարող են մռայլվել, և եթէ աջողվեց խուսափել նման միջադէպերի անցանկալի հետևանքներից, այդ եղաւ հէնց վաղեմի ռուս-գերմանական բարեկամութեան շնորհիւ և նրանով, որ երկու կառավարութիւնները աշխատում են ապագայում էլ պահել այդ բարեկամութիւնը։ Այդ աշխատանքի, ձգման մէջ, սակայն, կառավարութիւնները չեն հանդիպում միշտ հարկաւոր աջակցութեան մամուլի կողմից։ Սահմանի երկու կողմում հասարակութեան մէջ յուզվալի դրութիւն պահպանելը առանց բաւականին հիմունքի խելացի բան չէ, գուցէ և որոշ հանգամանքներում վտանգաւոր էլ է։ Այդ պատճառով ես չեմ կարող չը ցանկալ, որպէսզի ինչպէս գերմանական, նոյնպէս և ռուսական մամուլը վերջ դնէ անօգուտ բանակռւին և աւելի հանգիստ քննէ մեր փոխադարձ յարաբերութիւններին վերաբերող հարցերը (ձայներ աջից՝ «բրաւօ»)։ Չը պէտք է մոռանալ, որ մենք գտնվում ենք Գերմանիայի հետ նոր առևտրական պայմանագիր կապելու նախօրեակին և որ այդպիսին կարող է լինել արդիւնաւոր միմիայն երկու պայմանագրվող պետութիւնների արդարացի պահանջների համաձայնութեան պայմանով։ Այդ տեսակ հետևանքների հասնելու համար անհրաժեշտ է, որպէսզի բանակցութիւնները ընթանան հանգիստ, գործնական վիճակում, և ոչ թէ մշտական մեղադրանքների ու կասկածանքների ճնշման տակ, որոնք ստեղծում են փոխադարձ գրգիռ ու անվստահութիւն։

Ռուս-աւստրիական յարաբերութիւններ

Պատգամաւորութիւնների մէջ աւստրո-ունգարական արտաքին գործերի մինիստրի նօրերս արած յայտարարութիւնը այն մասին, որ Ռուսաստանի և Աւստրօ-Ունգարիայի յարաբերութիւնները կրում են միանգամայն բարեկամական բնաւորութիւն և մինիստրի արտայայտած յոյսը թէ՝ այդ յարաբերութիւնները կը պահեն իրանց բնոյթը այսուհետև էս, համապատասխանում է նաև մեր հայեացքին ու երկու պետութիւնների փոխ-յարաբերութիւններին, ինչպէս և մեր հարևանների հետ լաւ յարաբերութիւններ պահպանելու մեր անկեղծ կամեցողութեան։ Ուստի, եթէ նոյնիսկ վերջերս Գալիցիայում նկատելի է մեզ թշնամի խաւերի մէջ որոշ շարժում, ուղղված այն բանին, որպէսզի դժուարութիւններ ստեղծվեն մեզ համար մեր սահմանակից նահանգներում, մենք յոյս ենք տածում, թէ աւստրո-ունգարական կառավարութիւնը թոյլ չի տայ այդ շարժմանը մռայլել մեր բարեկամական յարաբերութիւնները։

Ռուսաստան եւ Իտալիա

Ռուսաստանի և Իտալիայի միջև յարաբերութիւնները մնում են բարեկամական և մեր կողմից ոչինչ այնպիսի բան չի լինի փոխել նրանց բարեկամական բնոյթը։

Մերձաւոր Արևելք

Դիմելով Մերձաւոր Արևելքում տիրող դրութեան, ես երկար չեմ կենտրոնացնի ձեր ուշադրութիւնը անցեալ տարվայ դէպքերի վրա։ Բոլոր մանրամասնութիւնները յայտնի են այն գրքից, որ լուսաբանում է Ռուսաստանի վերաբերմունքը դէպի բալկանեան տագնապը։ Միւս կողմից ես գտնում եմ, որ պէտք է զգուշութեամբ մօտենալ տակաւին չը բուժված վէրքերին և չը հանդարտված կրքերին։ Ռուսաստանի խնդիրը—խաղաղութիւն մացնելու խնդիր է, նրա պատգամները—անկողմնապահ բարեացակամութիւն է բալկանեան բոլոր պետութիւններին և օժանդակութիւն նրանցից ամեն մէկին, պայմանով միայն, եթէ լինի փոխադարձ անկեղծութիւն ու փոխադարձ վստահութիւն։ Անցեալ պատերազմների դէպքերը ընդլայնեցին Բալկանեան պետութիւններից իւրաքանչիւրի սահմանները, բայց արժեցան շատ զոհեր, շատ արիւն։ Այժմ նրանցից ամեն մէկի համար հասել է կենտրոնացած խաղաղ աշխատանքի ժամանակը նոր նուաճված շրջաններում։ Մենք կամենում ենք հաւատալ, որ իրականացնելով այդ վեհ խնդիրը, բալկանեան պետութիւնները այն գիտակցութեան կը գան, թէ պետականութիւնը ամրապնդելու նպատակով բաւական չէ հող ձեռք բերել, այլև հարկաւոր է վաստակել նոր քաղաքացիների վստահութիւնն ու անձնուիրութիւնը (բացագանչութիւններ ձախից՝ «ճիշդ է»)։ Միայն այդ պայմանով կարելի է հասնել ինչպէս ներքին հանգստութեան, այնպէս այդ բոլոր պետութիւնների փոխ-մերձեցման, որ այնքան անհրաժեշտ է նրանցից իւրաքանչիւրին խաղաղ զարգացման և «Բալկանները բալկանցիներին» լօզունգի համար։ Խօսելով Բալկանների մասին, ես չեմ կարող չը յիշել ռումինական պրինցի և պրինցեսի վերջերս Պետերբուրգ այցելելու մասին։ Նրանց ցոյց տրված սրտագին ընդունելութեան մէջ մեր բարձր հիւրերը կարող էին անձամբ համոզվել, որ Ռուսաստանը անկեղծօրէն է վերաբերվում դէպի նրանց երկիրը և յարգում է նրանց խելացի թագաւորին (աջից ձայներ՝ «բրաւօ»)։ Մօտիկ ապագայում Նորին Կայսերական Մեծութիւնն այցելելու է ռումինական թագաւորին։ Այդ հանդիպումը համապատասխանելով երկու Միապետների զգացմունքներին, միևնոյն ժամանակ ես հաւատացած եմ, որ նոր խրախուսանք կը ծառայէ երկու ժողովուրդների փոխադարձ մերձեցման ճանապարհի վրա, ժողովուրդների, որոնք միացած են փառաւոր անցեալով, համազօր շահերով ու համակրութեամբ։

Ալբանիայի դէպքերը

Ինչ վերաբերում է Ալբանիային, ի հարկէ, մենք պատշաճ ուշադրութեամբ հետևում ենք այդ երկրի դէպքերին, որ չափով այդ դէպքերը շօշափում են հարևան պետութիւնների շահերը։ Ներկայումս այդ երկիրը գտնվում է անիշխանութեան մօտ վիճակում։

Հայկական հարց

Բալկանեան ճգնաժամի լուծումը նպաստաւոր կերպով անդրադարձաւ մեր և Թիւրքիայի յարաբերութիւնների վրա։ Թիւրքիայի եւրոպական երկիրներն էին, ուր թաղնված էր Թիւրքիայի թուլութեան աղբիւրը։ Այսուհետև բնականօրէն նրա առաջ կիրառվում են ներքին վերակազմութեան նոր խնդիրներ թիւրքահպատակ բոլոր ժողովուրդների ընդհանուր բարեկեցութեան համար։ Այդ ուղղութեամբ սուլթանի կառավարութիւնը, հարկաւ, կը հանդիպէ պատրաստակամութեան Ռուսաստանի կողմից՝ պաշտպանելու այդ նպատակների իրագործմանը հետամուտ նրա ջանքերը։ Միմիայն Թիւրքիայի խաղաղ զարգացման մէջ կարելի է ապահովել ազատ առևտրական ծովագնացութեան ազատութիւնը նեղուցներում, համապատասխան ինչպէս նրա շահերին, այնպէս և Ռուսաստանի կենսական պահանջներին։ Թիւրքիայի ներկայ կառավարութեան խաղաղասէր մտադրութիւնների նախնական նշան հանդիսանում է այն ուղղութիւնը, որպիսին ստացաւ վերջին ժամանակներս հայկական հարցը։ Անատօլիայի արևելեան նահանգների սահմանակից լինելը Ռուսաստանին, ուր բնակվում են ի թիւս ազգաբնակչութեան անհամար հայեր, չէր կարող անտարբեր թողնել Կայսերական կառավարութեանը հանդէպ մեր սահմանամերձ մասում տիրող խեղճ դրութեան։ Թիւրքիայի հետ բարեկամական բանակցութիւնների հետևանքում մշակվեցին հիմունքներ վարչական կառավարելու ձևը կատարելագործելու և բարեկարգը ապահովելու համար, ինչպէս նաև հայերի և Ռուսաստանին կից շրջաններում բնակվող ժողովուրդների կուլտուրական կարիքներին գոհացումն տալու համար։ Արևելեան Անատօլիայի եօթ վիլայէթները, ինչպէս յայտնի է, պէտք է բաժանվեն երկու մասի, որոնցից իւրաքանչիւրի գլուխ նշանակված կը լինի եւրոպական վերատեսուչ (գեներալ-ինսպէկտոր) Բ. Դրան ընտրութեամբ մեծ պետութիւնների ներկայացրած թեկնածուներից։ Ազգաբնակութեան անձնական, ստացուածքային ու քաղաքացիական իրաւունքները ստանում են նոր երաշխիքներ, որոնք կը ծառայեն Արևելեան Անատօլիայի քրիստոնեայ ազգաբնակութեան խաղաղ զարգացման գրաւական։ Գոհունակութեամբ ես կընդգծեմ այստեղ, որ վերոյիշեալ բարենորոգումները ընդունել տալու գործում Գերմանիան ցոյց տուեց մեզ բարեկամական աջակցութիւն։

Յարաբերութիւններ Թիւրքիայի հետ

Նոր պայմանների հետ զուգընթաց, որոնց մէջ պարփակվում են ռուս-թիւրքական յարաբերութիւնները, մենք յոյս ենք տածում, որ կամրանան Ռուսաստանի արդէն գոյութիւն ունեցող տնտեսական կապերը հարևան թիւրքական վայրերի հետ և որ կը կենդանանան առևտրական յարաբերութիւնները մեր և Թիւրքիայի միջև։ Վերջում կաւելացնեմ, որ այն զրոյցները, որ ես ունեցայ Ղրիմում թիւրքաց արտակարգ պատուիրակութեան անդամների հետ, որ սուլթանի անունից եկել էր ողջունելու Թագաւոր Կայսրին և որի կազմի մէջ էին թիւրքաց կառավարութեան ականաւոր ներկայացուցիչները, իմ մէջ թողին այն տպաւորութիւնը, թէ Թիւրքիան լրջօրէն կամենում է սահմանել Ռուսաստանի հետ այնպիսի յարաբերութիւններ, որոնք համապատասխանէին երկու երկիրների շահերին և համաձայն լինեն նոր քաղաքական պայմաններին։

Ռուս-պարսկական յարաբերութիւններ.

Պարսկաստանում Ռուսիայի և Անգլիայի միջև շարունակվող փոխ-յարաբերութիւններից յետոյ վերջին ժամանակներս համեմատաբար լաւութիւն տիրեց։ Դրան նպաստեց Պարսկաստանի արևմուտքում եղած խառնակութեան ճնշումը, որը կատարվեց Կայսերական միսիայի ջանքերով և շահի զօրաբանակի ձեռքով, որին ղեկավարում էին ռուս օֆիցերները։ Դրա հետ միասին պարսից կառավարութիւնը ձեռք առաւ իրանից կախված միջոցները հասարակական կեանքը ապահովելու համար, առանձնապէս Թէհրանում՝ կարգաւորութիւններ մացնելու ճանապարհով, պարսկական կօզակների վաշտը աւելացնելով, մայրաքաղաքում ոստիկանական պահակախումբը կանօնաւորելով և այլն։ Այս հանգամանքները հնարաւորութիւն տուին Կայսերական կառավարութեան կանչել Ղազվինից այնտեղ եղած ռուսական վաշտի մեծ մասը։ Ինչ վերաբերում է մեր վաշտերին, որ գտնվում են Պարսկաստանի հիւսիսային տեղերում, մասնաւորապէս Ատրպատականում, բայց այն միտքը, որ կարգերը դեռ ևս հիմնաւորված չեն, կառավարութիւնը այժմ զրկում է հնարաւորութիւնից զօրքի մնացած մասերը յետ կանչելու։ Մեր զօրքը Պարսկաստանում լինելը համարելով ժամանակաւոր երևոյթ, կառավարութիւնը ենթադրում է որոշել այն մօմենտը, թէ երբ հնարաւոր կը լինի նրանց հեռացումը Պարսկաստանից, որ չը վնասի մեր շահերին։ Մեզ համար քաղաքական խիստ կարևոր երևոյթ է ներկայանում վերջին ժամանակներս Պարսկաստանի՝ Կ. Պոլսի հետ, Ռուսաստանի և Անգլիայի գործունեայ մասնակցութեամբ, կնքված դաշնագիրը թիւրքաց և պարսից սահմանագլխի հողամասերի մասին։ Այդ դաշնագրի որոշումները ի կատար են ածվում մի առանձին յանձնաժողովի ձեռքով, որը կազմված է ոչ միայն շահագրգռված անմիջական երկիրների ներկայացուցիչների մասնակցութեամբ, այլ և Ռուսաստանի և Անգլիայի ներկայացուցիչներից։ Յիշեալ ակտով, ինչպէս յայտնի է, վերջ դրվեց հարևան պետութիւնների դարաւոր վէճին և սահմանագլխում տիրող անորոշ դրութեան, որ միշտ լուրջ բարդութիւններ էր սպառնում։ Մեր քաղաքականութիւնը Պարսկաստանի վերաբերմամբ կը մնայ անփոփոխ բարեացակամ և հեռու որևէ ագրեսիվ նկատումներից։ Մեր նպատակն է, առաջվայ նման նպաստել մեզ սահմանակից այդ երկրի մէջ, որ կապված է մեզ հետ տնտեսական շահերով, հիմնաւոր կարգ հաստատել, որ այնքան կարևոր է առևտրական փոխադարձ յարաբերութիւնների համար՝ Պարսկաստանի առաջխաղացութեան և մեր այնտեղում ունեցած և ունենալիք տնտեսական բազմաթիւ նախաձեռնութիւնների համար։ Վերջինների թւումն է պատկանում, ինչպէս յայտնի է, առաջին երկաթուղագիծը Ջուլֆայից-Թաւրիզ, որ աջողութեամբ առաջ է գնում։ Մեր համաձայնութիւնը Անգլիայի հետ և բարեկամական գործակցութիւնը այդ պետութեան հետ, պարսից գործերի վերաբերմամբ, գրաւական է հանդիսանում Պարսկաստանում հասունացած խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու։

Հեռաւոր-Արևելեան քաղաքականութիւն

Մեր հեռաւոր-արևելեան քաղաքականութեան կենտրօնական առարկան կազմում են, առաջվայ նման, չինական գործերը։ Չինաստանում, մանջուրական դինաստիայից հրաժարվելուց յետոյ, նախագահ Իւանշիկայի կազմած կառավարութիւնը ցոյց տուեց կենսական ընդունակութիւն և անցած սեպտեմբերին պետութիւնները հնարաւոր համարեցին ճանաչել նրան։ Դրա հետ միասին նրանք երաշխաւորութիւն առան նրանից, որ նա պարտական է ճանաչել միջազգային դաշնագրերը, որոնք կնքված են եղել մանջուրական թագաւորների կառավարութեան կողմից, և այն բոլոր իրաւունքները, որով օտարները օգտվում են Չինաստանում թէ եղած համաձայնութեան իրաւունքով և թէ սրբագործված սովորութիւնների հիման վրա։ Իւանշիկայի կառավարութիւնը ցանկութեան ապացոյցներ տուեց օտարերկրացիների կեանքը և գոյքը պահպանելու Չինաստանի հիւսիսային շրջաններում։ Այդ պատճառով մենք այլևս անհրաժեշտ չը գտանք Պեկինում և Տեանցզինում վաշտեր պահել այնտեղ ապրող ռուսահպատակներին պահպանելու համար։ Ընթացիկ տարվայ մարտ ամսում մենք Չիլիքան գաւառից դուրս բերինք այնտեղ եղած մեր զօրամասերը։ Մեզ յայտնի է, որ մի քանի օտար պետութիւններ մտադիր են մեր օրինակին հետևել։ Պեկինում հանդէս եկած, պետութիւնների ճանաչած կենտրօնական կառավարութիւնը նպաստաւոր ազդեցութիւն ունեցաւ մեր դէպի Չինաստանն ունեցած յարաբերութիւնների վրա և մեզ հնարաւորութիւն տուեց մի շարք հարցեր հարթելու, որոնք ծագել էին չինական յեղափոխութեան ժամանակ։ Այդ հարցերի շարքում առաջին տեղը պէտք է դնել մօնղոլականը։

Մօնղօլական գործեր

Ինչպէս մեզ յայտնի է, պարոնայք, անցած տարվայ դեկտեմբերին արտաքին Մօնղոլիայի իշխանները իրանց անկախ յայտարարեցին չինական պետութիւնից և իրանց կառավարիչ ընտրեցին Ուրգիի քահանայապետ Խուտուխտային։ Այդ ժամանակից, չը նայած չինական կառավարութեան առարկութեան, որ կամենում էր Մօնղոլիան իբր մի գաւառ ճանաչել, Խուտուխտայի կառավարութիւնը օգտվում էր փաստական անկախութեամբ։ Այդ դէպքում հարց էր ծագում, թէ նրա կառավարութեան սահմաններում ռուսահպատակները ինչ իրաւունքներ են ունենալու։ Մենք անհրաժեշտ համարեցինք ձևակերպել այդ իրաւունքները Խուտուխտայի կառավարութեան հետ համաձայնութիւն կայացնելով։ Այդ նպատակով մենք 1912 թ. հոկտ. 21-ին նրա հետ կնքեցինք մի դաշնագիր, որով աւելի պարզ ձևակերպումով հաստատեցինք այն իրաւունքները, որոնցով Չինաստանի հետ կնքած դաշնագրի համաձայն Մօնղոլիայում օգտվում են ռուսահպատակները և առևտուրը։ Իրան հերթին մենք, այդ դաշնագրով, երաշխաւորեցինք Խուտուխտայի կառավարութեան մեր աջակցութիւնը չինական կառավարութեան ոտնձգութիւնների և այլ մի շարք բաների դէմ։ Այդպիսով մենք երաշխաւորեցինք մօնղոլներին ազատութիւն, որի համար 1911 թ. դեկտեմբերին մենք պնդեցինք Չինաստանի առաջ։

Ռուս-ճապօնական յարաբերութիւններ

Այդպիսի ոգով են տարվում մեր յարաբերութիւնները և Ճապօնիայի հետ մեր մէջ ծագած հարցերի վերաբերմամբ։ Վերջին ժամանակներս Չինաստանում տեղի ունեցած դէպքերը մեզ առիթ տուին ճապօնական կառավարութեան հետ մի շարք միջազգային բնոյթ ունեցող հարցեր շօշափել, ինչպէս օրինակ չինական փոխառութիւնների մասին։ Մենք բազմիցս անգամ յենվել ենք միմեանց վրա մեր շահերը պաշտպանելու համար։

Գաղթականութեան մասին

Պարոնայք, վերջացնելով մեր միջազգային յարաբերութիւնների և ռուս կառավարութեան քաղաքական գործունէութեան տեսութիւնը, ես թոյլ եմ տալիս ինձ ձեզանից մի քանի րոպէ խլել, որպէսզի համառօտ խօսքերով շօշափեմ մի քանի հարցեր, որոնք մտնում են իմ վարչական կառավարութեան շրջանը։ Այստեղ է մտնում ռուս գաղթականների դէպի արտասահման գաղթելու ցաւոտ հարցը։ Ես չեմ ծանրանայ այն բանի վրա, թէ որպիսի ծանր պայմանների մէջ են ընկնում մեր հայրենակիցները, որ գնում են օտար երկիրներ իբր աշխատանքի, իբր թէ օտար երկիրներում հաստատվելու, որոնց մասին նրանք մեծ մասամբ չափազանցված, ծիածանագոյն կարծիքներ ունեն։ Այդ ամենը բաւականին յայտնի է, և ես ուզում եմ ասել միայն, որ արտաքին գործերի մինիստրութիւնը մտահոգված է այդ դրութիւնից դուրս ելնելու համար, արտասահմանեան իր հիմնարկութիւնների ուշադրութիւնը հրաւիրելով այն տեղերի վրա, ուր մեծ քանակութեամբ ռուս գաղթականներ են գնում, որ վերջիններիս ամեն տեսակ անհրաժեշտ աջակցութիւն ցոյց տան։ Բացի այդ մինիստրութիւնը յանձնարարել է իր ներկայացուցիչներին մանրամասն տեղեկութիւններ ներկայացնել գաղթականներին տեղերի պայմանների մասին, որպէսզի միջոցներ մշակվեն գոյութիւն ունեցող դրութիւնը կարգաւորելու համար։ Կառավարութիւնը մտադիր է այդ մասին մի օրինագիծ մացնել Պետ. Դումա քննութեան համար։ Իմ կողմից կարող եմ յոյս յայտնել, որ դուք այդ օրինագծին համակրութեամբ կը վերաբերվէք, որովհետև առանց լայն միջոցների և համապատասխան ծախսերի՝ արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչները ամենաուշադիր վերաբերմունքով անգամ չեն կարող օգնել աշխատանք փնտռող գաղթականներին։

Վարչական բարենորոգումներ

Վերջում պարտք եմ համարում մատնանշել, որ ինձ յանձնված վարչութեան մէջ անհրաժեշտ բարեկարգութիւններ մացնելու համար ես մտադիր եմ օրէնսդրական վարչութեան քննութեանը ներկայացնել մի նախագիծ, որի կազմութիւնը գրեթէ վերջացած է։ Բացի այդ՝ արտաքին գործերի մինիստրութեան մէջ ներկայումս հրաւիրված է միջվարչական խորհրդակցութիւն, մինիստրութեան արտասահմանեան ծառայութիւնները բարեկարգելու հարցերը քննելու համար։ Այդ բարենորոգման ծրագիրը աշնանը կը մացվի Դումա, ձեր քննութեան (ծափահարութիւններ կենտրօնում, աջակողմում և ձախակողմում)։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Երէկ Թիֆլիսում հեռագիր ստացվեց, որ փոխարքայ Վօրօնցօվ-Դաշկօվ իր ամուսնու հետ միասին աջողութեամբ հասել է Սեվաստօպօլ։

◆ Ինժ. Մ. Գ. Ալիբէկեան Բագուից՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի անունով պօլիտեխնիկումի հիմնարկութեան օրը ուղարկել է հետևեալ հեռագիրը. «Կովկասի առաջին բարձր կրթարանի հիմնարկութիւնը հանդիսանում է նշանակալից և ուրախալի օր մեզ բոլորիս, կովկասցիներիս համար, որովհետև դրա հետ միասին ամուր հիմք է դրվում մեր երկրի կուլտուրական զարգացման։ Թող ուրեմն կառուցվող գիտութեան տաճարը միացնի Կովկասի բոլոր ազգութիւններին։ Ընդունեցէք իմ լուման շինութեան համար՝ 20,000 ռուբլի»։

◆ Թիֆլիսում հիմնվելիք Թուրքաց իգական պրօգիմնազիայի շինութեան համար հաւաքվել է մինչև այժմ 35,000 ռուբլի։

◆ Ինչպէս յայտնի է, քաղաքային լոմբարդը տեղափոխվում է Մելիք-Ազարեանի նոր շէնքը։ Այդ առիթով քաղ. վարչութիւնը մի զեկուցում է մացնում դումա՝ 3,050 ռուբլի յատկացնելու լոմբարդի իրերը տեղափոխելու, նոր բնակարանը կահաւորելու և այլ ծախսերի համար։

◆ Քաղ. վարչութիւնը հաւանութիւն տուեց քաղաքագլխի օգնականի պաշտօն հաստատելու մտքին։

◆ Այսօր, Ժողովրդական Տանը, հայկական դրամատիկ խմբակցութիւնը տ. Արմէնեանի բենեֆիսին կը ներկայացնէ Շիրվանզադէի «Չար ոգին» պիէսը, որը առաջին անգամն է դրվում Ժողովրդական Տան բեմի վրա։ Տիկին Արմէնեանը կատարելու է Սօնայի դերը։

◆ Այս օրերս քաղ. դուման մի զեկուցում կը մացվի Հալաբարի քաղաքային դպրոցների շէնքերի կառուցման համար, պետական գանձարանի հաշւին, 64,000 ռ. յատկացնելու մասին։

◆ Նահանգապետ Ա. Գ. Չերնեավսկին Սղնախի գաւառից վերադարձաւ Թիֆլիս։

◆ Վրաց բեմական գործիչների համագումարը նշանակված է մայիսի 25-ին։

◆ Մսի սակագինը վերացնելու հարցի քննութիւնը թողնված է միւս շաբթին։

◆ Ինժեներ Ա. Դ. Լաւրենտիևին թոյլատրված է աւտօմոբիլային հաղորդակցութիւն սկսել Թիֆլիսից Մանգլիս, Մանգլիսից Գոմբոր և Թելաւ։

◆ Առաջիկայ ամառը Թիֆլիսի և Մօսկվայի միջև գործելու են սառցավագօններ՝ շուտ փչացող մթերքներ տեղափոխելու համար։

◆ Այսօր երեկոյեան, Երաժշտական ընկերութեան դահլիճում, Սեդրակ Թառայեանը ռուսերէն լեզուով կը կարդայ մի դասախօսութիւն հետևեալ թեմայով. «Основные принципы нравственности». Դասախօսութիւնից յետոյ տեղի կունենայ մտքերի փոխանակութիւն։

◆ Այսօրվանից Թիֆլիսում հրատարակվելու է «Заря Кавказа» անունով մի օրաթերթ։

◆ Վերջին օրերս Թիֆլիսում շարունակ անձրևներ են տեղում, որի հետևանքով Կուր գետի ջուրը սաստիկ վարարել է։

◆ Թիֆլիս է եկել մի հայ երիտասարդ երգիչ-բարիտօն Սեդրակ Իսահակեան անունով, որ իր ուսումը ստացել է առաջ Մօսկվայում և ապա Միլանի կօնսերվատօրիայում։ Երիտասարդ երգիչն առաջիկայ շաբաթ, մայիսի 17-ին, տալու է մի համերգ։

◆ Թիֆլիսի նախկին ոստիկանապետ Ֆ. Ա. Զասիպկինը նշանակվում է Սուխումի շրջանի կառավարիչ։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Մայրաքաղաքի թերթերի ասելով, պատրաստված են արդէն երեք հրաման. մէկը՝ ներքին գործերի մինիստր Մակլակօվին Պետ. Խորհրդի անդամ նշանակելու մասին, միւսը՝ Կրիվօշէինին ներքին գործերի մինիստր նշանակելու մասին և երրորդը՝ Իգնատիևին երկրագործութեան ու հողային բարեկարգութեան գլխաւոր կառավարիչ կարգելու մասին։

◆ Ոստիկանութեան դեպարտամենտը արտասահմանից՝ պրօֆ. Մեբէժկօվսկիից ստացաւ մի ընդարձակ նամակ, որի մէջ տխրահռչակ ասպետը նախազգուշացնում է վերջին անգամ, որ իր կորստեան հետ կը կորչեն և շատ «յայտնի» անձեր, եթէ նա մնայ բարձի-թողի արված։

◆ Ինչպէս յայտնի է, Պետական Դումայի վերջին նիստերից մէկում Պուրիշկէվիչը իր ճառում խիստ քննադատութեան ենթարկեց նահանգապետների գործունէութիւնը, մեղադրելով նոյնիսկ բարձր իշխանութիւններին նրանում, որ սրանք փոխանակ պաշտօնանկ անելու անընդունակ նահանգապետներին՝ ընդհակառակն նրանց աստիճանները բարձրացնում են։ Ներկայումս բարձր ղեկավար շրջաններում Պուրիշկէվիչի «քննադատութիւնը» թողել է շատ անհաճոյ տպաւորութիւն։ Պնդում են, որ Պուրիշկէվիչի մեղադրանքը չը պէտք է անպատասխան թողնել։ Այն նահանգապետներին, որոնց սևացրեց Պուրիշկէվիչը, առաջարկվելու է դատ սկսել Պուրիշկէվիչի դէմ զրպարտութեան համար, այլապէս նրանց պաշտօնավարութիւնը այնքան էլ յարմար չի նկատվի այսուհետև։

◆ Բարձրագոյն անհետևանք է թողնվել ֆինլանդական սէյմի այն ուղերձը, որով 300,000 մարկ պէտք է յատկացվէր գործադուլներին օգնութիւն հասցնելու, քաղաքային և շինական համայնական վարչութիւնները և համայնական ընտրութիւնները վերակազմելու համար։

◆ Գեներալ Զէյնը ամենահպատակօրէն զեկուցեց Թագաւոր Կայսրին, որ ֆինլանդական սէյմը, հակառակ սահմանված կանօնի, փակվելուց յետոյ ռուսերէն չը թարգմանեց սէյմի որոշումները, որոնք սէյմը փակվելիս յանձնվում են ֆինլանդական գեներալ-նահանգապետին։

◆ Այս տարի ժող. լուս. մինիստրի կարգադրութեան համաձայն ոչ մի հրեայ ուսանող չէ ընդունվելու Պետերբուրգի և Մօսկվայի համալսարաններում, Պետերբուրգի տեխնոլօգիական ինստիտուտում և Մօսկվայի տեխնիքական դպրոցում։

◆ Ժող. լուս. մինիստրը պաշտօնանկ արեց Կազանի համալսարանի պրօֆ. Մեբէժկօվսկիին։

ԷՋՄԻԱԾՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Քաղված «Արարատից»)

◆ Սինօդը, լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի կօնսիստօրիայի այս տարվայ փետր. 4-ի № 305 յայտարարութիւնը, որոշեց. Նախ՝ բացատրել նոյն կօնսիստօրիային, որ հայ-լուսաւորչական դաւանութիւն ընդունած հրէաները կարող են նորից դառնալ իրանց դաւանութեան՝ համաձայն 1905 թ. ապրիլի 17-ի Բարձրագոյն հրովարտակի, և, երկրորդ, վերստին յիշեցնել կօնսիստօրիային, որ հրէաներին հայ-լուսաւորչական եկեղեցու գիրկն ընդունելիս լինեն խիստ զգոյշ և ամեն անգամ ստուգեն, թէ նրանք ներքին համոզմունքից դրդված են դիմում քրիստոնէութեան թէ ուրիշ նկատումներով։

◆ Սինօդը որոշեց. համաձայն Վեհափառ Կաթողիկոսի բանաւոր պատուէրի փոխադրել Տարօնում կառուցվելիք Պօղօսեան վարժարանի շինութեան համար Տարօնի առաջնորդին 2000 ր. սինօդի գանձարանում այդ նպատակով պահվող գումարից։

◆ Մըրկից վնասվածների օգտին վեհ. Հայրապետի բարեհաճ կարգադրութեամբ սինօդն ուղարկել է Թիֆլիսի յանձնաժողովի նախագահուհի Նորին Պայծառափայլութիւն Կովկասի փոխարքայի ամուսին Ելիզավէտա Անդրէեւնա Վօրօնցօվ-Դաշկօվային 200 ր.։

◆ Մարտի 22-ին էջմիածին է հասել Վանի Ֆրանսիական հիւպատոս պ. Սանֆօրդ, որ ներկայանալով Նորին Վեհափառութեան՝ նոյն օրն էլ մեկնել է դէպի Վան։ Իսկ նոյն ամսի 25-ին էլ Վանի ժանդարմերիայի պետ Ֆրանսիացի պ. Մարրասէն իր կնոջ հետ, նոյնպէս ներկայանալով Նորին Վեհափառութեան, ճանապարհվեց Վան ամսի 27-ին։ Թէ հիւպատոս պ. Սաֆօրդը և թէ պ. Մարրասէն իր կնոջ հետ պատշաճ կերպով հիւրասիրվեցին Մայր Աթոռում։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Մայիսի 10-ին՝ Թիֆլիս քաղաքացի Բօգդան Բօգդանօվ յայտնեց ոստիկանութեան, որ անյայտ չարագործները իր տնից գողացել են 400 րուբլի արժողութեամբ զանազան իրեր։

◆ Նոյն օրը, Մուշտայիդում, շերամապահական կայարանի ծառայի որդին Կուր գետի ափին երեխաների հետ խաղալու միջոցին ընկաւ գետը և խեղդվեց։ Նրա դիակը ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

—

Թաւրիզ, 1 մայիսի

Երգչուհի օր. Մ. Սօլօվեան մի քանի օրով Թաւրիզում հիւր լինելու հետեւանքով տուեց մի համերգ ապրիլի 13-ին Ղալայի թատերասրահում մասնակցութեամբ ջութակահար Ա. Նազարբէկեանի և յոյն պ. Վլադիկայի, որ նուագում էր դաշնամուրի վրայ։

Օր. Սօլօվեան շնորհալի երգերով, Նազարբէկեան նուագածութեամբ գեղարուեստական մեծ բաւականութիւն պատճառեցին հասարակութեան։

Ապրիլի 18-ին Լիլավայի թատերասրահում դերասան պ. Ոսկանեանի, ռուս և հայ սիրողների մասնակցութեամբ ներկայացվեց ռուսերէն լեզուով Արցիբաշեվի «Խանդ» դրաման։ Դերասան Ոսկանեան ինչպէս որ նոյն դրամայի հայերէն ներկայացման, նմանապէս և ռուսերէնի մէջ հանդէս եկաւ իր մշակված և շնորհալի խաղով (Սերգէյ Պետրօվիչ) և արժանացաւ երկար ծափահարութեանց։ Ներկայացման արդիւնքը Լիլավա թաղի ուսումնարանների օգտին էր։

Ապրիլի 21-ին Ղալայի Արամեան ուսումնարանի թատերասրահում դերասան Ոսկանեան սիրողների աջակցութեամբ ռուսերէն լեզուով ներկայացրեց Գօգօլի «Վերաքննիչ» պիէսայի երկրորդ գործողութիւնը և հայերէն՝ «Խէչօյի Թուղը»։ Որովհետև ներկայացման հասոյթը մի ուսանողի օգտին էր, իր ջութակով մասնակցեց նաև պ. Ա. Նազարբէկեան և արժանացաւ ծափերի և բուռն շնորհակալութեան իր խիստ դուրեկան նուագածութեան համար։

Հայկազուն

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲԱՑ-ՆԱՄԱԿ

Պ. Կ. Գասպարեանին

—

Բագու, 7 մայիսի

«Մշակի» № 96-ում տպված ձեր դիմումին պատասխանում եմ, որ ես այդպիսի պարտաւորութիւն յանձն չեմ առած, թէև դատավարութիւնից 4 թէ 5 օր յետոյ յանձնած եմ «Մշակի» խմբագրութեանը դատավարութեան ճշգրիտ պատկերը, խնդրելով տպագրել այն մօտ ապագայում։

Թէ ինչու մինչև օրս լոյս չընծայեց խմբագրութիւնը, անհասկանալի է ինձ համար միանգամայն, թէև դարձեալ սպասում եմ նրա տպագրվելուն*)։

Վերջապէս ինքներդ էլ կարող էք վերցնել դատավարութեան որոշման պատճէնը (եթէ այդ գտնում էք ձեզ համար շահաւէտ և պատուաբեր) և յանձնել լրագրութեան տպագրելու։

Եւ կամ տպագրել այն ստորագրութեան իսկական պատճէնը, որ առել էք իմ հաւատարմատարից*)։

Ասքանազ Տէր-Սիմէօնեան

---

*) Ճիշդ է, Ա. Տէր-Սիմէօնեանը խմբագրութեանս ուղարկել էր մի երկար բացատրութիւն, բայց դա միանգամայն հակառակ լինելով Գ. Գասպարեանի մեզ ցոյց տուած՝ դատարանի վճռի պատճէնին, մենք հարկ չը համարեցինք տպել։ Խմբ.

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

—

◆ Կիլիկեան մեր թղթակիցներից մին, Լևոն Աճէմեան, «Մշակի» № 92-ում Դէօրթեօլից գրած թղթակցութեան մէջ հաղորդում էր, թէ ապրիլի 20-ին տեղի է ունենալու Սիսում միւռոնօրհնութիւն և թէ Կիլիկիայի կաթողիկոսը այդ առիթով շրջաբերականով տեղեկացրել է իր հօտին։

Արդ՝ ինչպէս հաղորդում է «Բիւզանդիոնի» Սիսի թղթակիցը, այդ նոյն օրը նշանակված է եղել Հաջընի առաջնորդ Պետրոս ծ. վ. Սարաճեանի և Կիլիկիայի Սահակ կաթողիկոսի անձնական քարտուղար Գիւտ ծ. վ. Մխիթարեանի եպիսկոպոսական ձեռնադրութիւնը։ Զէյթունի և Ֆռընուզի հայութիւնը բացակայել է այդ հանդէսներին, որովհետև կաթողիկոսը մերժել է յարգել այդ վայրերի հայութեան միջնորդութիւնը՝ իրանց առաջնորդներին եպիսկոպոսական աստիճան տալու մասին։

Պէտք է ասած, որ ժողովուրդը օրեր առաջ մի բազմաստորագիր համախօսական է ներկայացրել կաթողիկոսին, արգելելու համար Գիւտ ծ. վ. Մխիթարեանի եպիսկոպոսացումը. սակայն այդ համախօսականն անյաջող է մնացել։ Կաթողիկոսը ձեռնադրութեան մի-երկու օր մնացած՝ ստացել է հասարակութեան ցանկութիւնը յիշեցնող մի գրութիւն ևս, ուր մատնացուցված է եղել հակառակ դէպքում տեղի ունենալիք ժողովրդական ցոյցերի մասին։ Այդ վերջին դիմումն էլ անցել է անօգուտ։

Եւ ահա՝ ձեռնադրութեան օրը նախազգուշութեան համար թէև ցանկացել են հասարակութեանը անխտիր բաց չը թողնել տաճարի ներսը, բայց ժողովրդական ամբոխը գրոհ տալով մտել է ներս և արարողութեան այն միջոցին, երբ կաթողիկոսը բեմից հրաւիրել է եկեղեցականութեան եօթը կարգերը ներկայացնող եօթ զոյգերին, վանքի կամարները թնդացել են «արժանի չէ» աղաղակներով, որոնք անընդհատ շարունակել են մի ժամ։ Միւթէսարըֆը, որ ներկայ է եղել արարողութիւններին, ի զուր փորձել է միջամտել. կաթողիկոսը մի քանի անգամ ցանկացել է խօսել, բայց անօգուտ, որովհետև աղմուկը հետզհետէ աճելիս է եղել։ Հալէպի առաջնորդ Ներսէս եպ. Դանիէլեան խօսք առնելով հազիւ է լռեցրել յուզված ժողովրդին, բայց հէնց որ վերսկսվել է ձեռնադրութեան արարողութիւնը, ժխորը սկսվել է աւելի մեծ թափով։ Կառավարչի հրամանով բերվել են մի խումբ զինուորներ, չը նայած որ կարգը պահպանելու համար արդէն ներկայ են եղել ոստիկաններ ու ժանդարմներ իրանց հրամանատարով։ Զինուորների ներկայութիւնն աւելի ևս յուզել է ցուցարարներին։ Երբ զինուորներն աշխատել են տաճարից դուրս հանել ցուցարարներից մէկին, Դէլի Արթին անուն մի հուժկու ու յանդուգն երիտասարդի, յուզումը հասել է իր գագաթնակէտին։ Զինուորներն ստիպվել են հեռանալ, իսկ ցոյցը շարունակվել է։

Կաթողիկոսը ցանկացել է հանդէսը փակել և վերջ տալ ցոյցին, բայց տեղացի հարուստները ստիպել են շարունակել արարողութիւնը։ Ի վերջոյ, տեսնելով որ ցոյցը չէ դադարելու, Գիւտ ծ. վ., թէև շատ ուշ, հրապարակով հրաժարվել է եպիսկոպոսանալուց։ Կաթողիկոսը՝ զայրացած՝ դուրս է եկել տաճարից և սպառնացել է հրաժարվել ու հեռանալ Կիլիկիայից։ Եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ու պատարագի արարողութիւնները մնացել են կիսակատար։

Դէպքի հետեւեալ օրը, բոլոր նախազգուշական միջոցները ձեռք առնելուց յետոյ, կատարվել են ձեռնադրութիւններն առանց որևէ միջադէպի։

◆ Ապրիլի 13/26-ին Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրէում տեղի է ունեցել Հայկ. Բար. Ընդհ. Միութեան 5-դ ընդհանուր ժողովը, որի օրակարգն է եղել Միութեան 7-դ և 8-դ տարեշրջանների (1912 և 1913 թ. թ.) տեղեկագրի քննութիւնն և առաջիկայ երկամեայ հաշւեկշռի վաւերացումը, ինչպէս և խորհրդակցութիւն զանազան առաջարկների առիթով։

◆ Վանի ծերունազարդ միսիոնար դօքտ. Րէյնօլդս, որ քանի մը ամսէ ի վեր Ամերիկա կը գտնուէր Վանի մէջ կառուցուելիք նոր կօլէջին համար դրամ հանգանակելու, Նիւ-Եօրք գացած է։ Ապրիլ 24. ուրբաթ իրիկուն, Նիւ Եօրքի ազգայինները երեկոյթ մը տուին ի պատիւ հայասէր միսիոնարին, որուն մէջ դօկտ. Րէյնօլդս շահեկան տեղեկութիւններ հաղորդեր է Վանի կրթական գործերուն վրայ և ցոյց տուեր է Հայաստանի սրտին, Վանի մէջ բարձրագոյն կրթութիւն տալու համար կօլէջի մը կենսական պէտքը։ Դօկտ. Րէյնօլդս նպատակ դրած է 100,000 դոլարի գումար մը հանգանակել Ամերիկայի մէջ, և շատ փափաք ունի, որ այս գումարէն գոնէ 12,000 հայերը տան։ Հաւատք ունի թէ հայերուն 10—12,000-ով՝ կարող պիտի ըլլայ մնացածը ամերիկացիներէն հանել։ Մինչև հիմա հայերէն հանգանակած է 5000 դոլարի մօտ, ու հիմա քաղաքէ քաղաք կը շրջի այս գումարը լրացնելու համար։ («Բիւզ.»)

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Ներկայումս Բօլգարիայումն է գտնվում ալբանական գահի նոր պրետենդենտ Իզզեդին Կասարիօտան, որ, ինչպէս հաղորդում են դիւանագիտական շրջաններից, եռանդուն ագիտացիա է մղում բօլգարահպատակ ալբանների մէջ։

◆ Ամենաարժանահաւատ աղբիւրներից տեղեկացնում են, որ երբ արդէն պատռվեց մէկ անգամ ընդմիշտ Էսադ-փաշայի՝ իբրև երիտասարդ թիւրքերի լրտեսի և գործակալի դիմակը, թիւրքաց կառավարութիւնը ոչ մի միջոցի առաջ չէ կանգնում գաղտնի կերպով գրգռելու մահմեդական ազգաբնակութիւնը քրիստոնեայ իշխան Վիդի դէմ, որին պաշտպանելու համար Դուրացցօ են մեկնել աւստրիական խոշոր ռազմանաւեր։ Շատ հնարաւոր է, որ գալիք բարդութիւնների առաջն առնելու համար մեծ պետութիւնները գրաւեն Ալբանիան իրանց զօրքերով։

◆ Բ. Դուռը Կ. Պօլսի ֆրանսիական դեսպանին յանձնեց միջազգային, ֆինանսական մասնաժողովին ներկայացնելու համար օսմանեան պարտքը, որ վճարելու են բալկանեան տէրութիւնները հետևեալ կերպով. Յունաստանը 14.315,406 թիւրքական ֆունտ, Սերբիան՝ 4.451,473, Բօլգարիան՝ 4.075,590, Ալբանիան՝ 1.090,685 և Չերնօգօրիան՝ 151,040։

◆ «Matin»-ի ասելով, միայն Կրուպպի ֆիրման գերմանական զինուորական տուրք է վճարելու աւելի քան 10 միլիոն ֆրանկ։

◆ Վիէննայից հեռագրում են, որ պրինց Վիդը կարգադրել է քննութիւն նշանակել Էսադ-փաշայի վրա, մեղադրելով նրան պետական դաւաճանութեան մէջ։

◆ Իտալական լրագիրների ասելով, Ալբանիայում ամենուրեք աշխատում են գաղտնի ագիտատօրներ, որոնք ունեն մեծ գումարներ և խոշոր քանակութեամբ զէնք։

◆ Ալբանիայի անիշխանական դրութիւնը բարդացաւ գիւղացիական շարժումով, որ ուղղված է ֆէօդալների դէմ, որոնք յափշտակել են լաւ հողերը։

◆ Ալբանիայից յետ կանչվեցին բոլոր իտալացի պաշտօնեաները, ուսուցիչները և ագրօնօմները, որոնց ծառայութեան էր հրաւիրել ալբանական կառավարութիւնը։

◆ Գերմանական րէյխստագի փակման ժամանակ տեղի ունեցաւ սկանդալ։ Հակառակ սովորութեան, երբ նախագահը ի պատիւ կայսրի «hoch» էր բացագանչում, սօցիալիստները դուրս չը գնացին դահլիճից, այլ և չը կանգնեցին և շարունակեցին նստած մնալ իրանց տեղերում։ Նախագահը սօցիալիստների վարվունքը որակեց անտակտ։ Սօցիալիստները պատասխանեցին աղմկալի բողոքով, մինչդեռ աջակողմեանները շարունակ «hoch» էին աղաղակում։ Ընդհանուր աղմուկի մէջ նախագահը շտապեց փակել նիստը։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ գլուխ է բարձրացնում շօվինիստական ագրեսիվ ուղղութիւնը յոյների դէմ։ Պրօպագանդա է մղվում յանուն հայրենասիրական զգացմունքների յետ խլել Սալօնիկը, Մօնաստիրը և Ուսկիւբը։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОДОЛЬ
Безспорно
лучшее
полосканіе

(М. 141264/141281)

Օդոլը, ակնաւոր գիտնականների միահամուռ կարծիքով, ներկայանում է իբրև ատամների ողողիչ, որը ներկայումս աւելի կատարելապէս համապատասխանում է ատամների առողջապահական պահանջներին։

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.
Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլեկտրոթէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տելեֆօն № 388.
(ա. օ.) 112. 100—67

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Պուշկինի, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին ջղային և երեխայոց հիւանդութ.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—10—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—44

Բժ. Ե. ՄԻՆԱՍԵԱՆ
Ընդունում է մարսողական—սննդառութեան խանգարումներից (գերութիւն, սակաւարիւնութիւն, արտէրիօսկլէրօզ, յօդացաւ, պոդագրա), մալարիայից և տուբէրկուլօզից տառապողներին։
Պարիզի պրոֆ. Mathieu-ի կլինիկայից։
Առ. ժ. 9—11-ը ◆ երեկ. ժ. 5—7-ը։
Հասցէն՝ Михайловск. пр. 86. Телеф. 765.
(ե. ու. կ.) 400. 100—6

Լոյս տեսաւ
ԴՈՔՏՕՐ Վ. ԱՒ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱՄԼՈՒԹԻՒՆ և
ՀԱԿԱԲԵՂՄՆԱՒՈՐԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐ
(Ռեցեպտներ և դեղեր հիւանդութեան և այլ դէպքերում յղութիւնից խոյս տալու համար)։
Գինը 25 կոպ.։
(Ուրիշ քաղաքներից պահանջողները կը բարեհաճեն ուղարկել 35 կոպ. մարկաներ՝ ճանապարհածախսը մեզ վրա)։ Վերադիր վճարով չէ ուղարկվում. գրախանութներին միմիայն կանխիկ 30% զեղչ։
Դիմել՝ Тифлисъ. Редакція «Журналъ-Лечебникъ».
(ե. ու.) 464. 10—2

Կրասնովոդսկի համար հարկաւոր է
ՄԻ ՁԱՅՆԱՒՈՐ և ՀՄՈՒՏ
ՏԻՐԱՑՈՒ
Պայմաններն են՝ տարեկան 300 ր. ռոճիկ և և մօտ 300 ր. արդիւնք։ Դիմել՝ Красноводскъ (Закасп. обл.), Армянскому священнику Гарегину Асрянъ.
(օ. մ.) 463. 4—1

USOMASOL
ԱՏԱՄԻ ԷԼԻԿՍԻՐ
Ատամներն ամրացնում է և առողջ դրութեան մէջ պահում, պնդացնում է լնդերքը և ախտահանում է բերանի խոռոչը։
Սրուակի գինը 1 ր. 50 կ., 1 ր. և 50 կ.։
USOMASOL ԸՆԿ.
Ստօկհօլմում.
Պահեստը Կովկասեան Ընկ. Դեղային Ապրանքների խանութում։
(М. 50498) 8—8

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ. ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ.
Լոյս տեսաւ Անուշաւան Տէր-Ղեւոնդեանի
1) ԽԱՌՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ՝
«Ուռենի» խօսքեր Աւ. Իսահակեանի և «Արի ընկեր» խօսքեր Ալ. Ծատուրեանի
Գինն է 40 կ.։
2) ԵՐԿՈՒ ԽՄԲԵՐԳ
«Ծաղկոց մտայ» և «Անցիր սեւ ամպ»
Գինն է 30 կ.։
Պահեստը Ընկ. մօտ. Тифлисъ, Кавказское Армянское Издательское О-во. Абасъ-Абадская пл. № 7.
(ե.) 452. 2—2


Փականա-Մեխանիկակ.
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ՉԱՅՐՎՈՂ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
ՎԵՐՆԵՐ ՊՖԷՅԼ
Վօկզալնայա փ. № 3.
(օ.մ.) 100. 100—37

Լոյս տեսաւ
ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ
Մարգարիտներ հայ բանահիւսութեան
Բ. գիրք.
Էջմիածնի գաւառում Ե. Լալայեանի գրի առած հէքիաթներ։
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ։
Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во.
(ե.հ.կ.) Тифлисъ. 438. 5—2

Պեատիգօրսկի հայոց դպ. համար հարկաւոր է
ՄԻ ԽՄԲԱՊԵՏ-ՈՒՍՈՒՑԻՉ
ճեմարանը կամ թեմական դպրոց աւարտած։ Դպրոցում կունենայ 15 դաս և վերակացութիւն ներկայ տարվայ սեպտեմբերից մինչև 1915 թ. սեպտեմբերի 1-ը, նոյնպէս և պիտի վարէ եկեղեցու խմբապետութիւնը։ Ռոճիկ 775 ր.։ Այդ պայմանից անկախ, այս ամառվայ երեք ամիսները եկեղեցու խմբապետութեան համար կը ստանայ ամսական 50 րուբլի։ Ցանկացողները թող դիմեն Պեատիգօրսկ հայոց եկեղ.-ծխ. հոգաբարձութեան նախագահ Զ. Մելիք-Ամիրզադեանցին։
Ծխ. Հոգաբարձութիւն
(ա. օ.) 453. 3—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ
ներկայ մայիսի 17-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակած ունի աճուրդ կապալով տալու քաղաքային սպանդանոցի հետևեալ մասերը.
1) Ֆրէյբանկ՝ հնացած միսը ստերիլիզացիայի ենթարկելու համար.
2) Կենդանիների փորոտիքը աղբից մաքրելու և վերջինիցս տուկեր պատրաստելու շինութիւն, և
3) Անպէտք համարված մսեղէնը և կենդանիների այլ օրգանները, նոյնպէս և սպանդանոցում կուտակվող արիւնը ուտիլիզացիայի ենթարկելու համար գործարան։
Աճուրդին պէտք է ներկայացնել 1500 րուբլի գրաւական կանխիկ դրամով կամ թէ արժեթղթերով։
Պայմանների հետ կարելի է ծանօթանալ շինարարական III բաժանմունքում լի օրերը՝ ցերեկվայ ժամը 1—2-ը։
(օ. մ.) 460. 3—1

ՇԱՐԺԻՉՆԵՐ
ԱԿՑ. ԸՆԿ. Тифлис. Метал. Заводъ
Ինժեներ Գ. Ջ. ԵԱՐԱԼԵԱՆ և ԸՆԿ.
Թիֆլիս, Կվիրիլսկայա, № 9, սեփ. տուն
Տելեֆօն № 9. Կառավարչի բնակարան 14—78.
Գործարանը պատրաստում է եւ կառուցանում տրանսմիսիաներ, ֆրիկցիոն մուֆտաներ, սեղմիչ ճախարակներ, ճախարականիւներ, շարժիչ-թեւեր, ատամնաւոր անիւներ, րեգուլյատօրներ, փոկեր եւ այլն։
(ե.) 175. 25—7
[illegible]


ՄԱՐՄԱՐԵ-ՄՕԶԱՅԻԿ
եւ
ԳԵՂԱՐ.-ԱՐՁԱՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
Ա. ՐԻՑՑԻ
Ընդունվում են պատուէրներ ամեն տեսակ արձանագործական և շինարարական աշխատանքների՝ ինչպէս իսկական, նոյնպէս և արհեստական քարերից և մօզայիկներից։ Արհեստանոցում մեծ քանակութեամբ կան իտալական-կալլարեան մարմարից յուշարձաններ, փիգուրներ և կարասեղներ, համար տախտակներ, նոյնպէս և ամեն տեսակ յուշարձաններ գրանիտից լաբրադօրից և տեղական քարերից։
Լուսանկարչական պատկերներից կամ բնականից անմիջապէս պատուէրները՝ մարմարէ և բրօնզեայ բարելիէֆների, կիսանդրիների և փիգուրների համար—ընդունվում են առանց կանխավճարի։
(ե. կ.) 365. 5—4

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовскаяулица, домъ казенный